



Ստրասբուրգ, 14 հոկտեմբերի 2019 թվական  
 Եզրակացություն թիվ 963/2019

CDL-AD(2019)024  
 Բնօրինակը՝ անգլերեն

**«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ»  
 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
 (ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)**

**ՀԱՅԱՍՏԱՆ**

**ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ  
 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՔԻ  
 ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ  
 (ՄԻԳՏ) ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ (ՄԻՏ)  
 ՀԱՄԱՏԵՂ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ 120-ՐԴ  
 ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏՈՒՄ (ՎԵՆԵՏԻԿ, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-12)**

**հետեւյալ անձանց կողմից ներկայացված դիտողությունների հիման վրա՝  
 պրն Նիկոլայ ԷՍԱՆՈՒ (փոխարինող անդամ, Մոլդովայի Հանրապետություն)  
 պրն Յոհան ՀԻՇՖԵԼԹ (փոխարինող անդամ, Շվեդիա)  
 պրն Մարտին ԿՈՒՅՋԵՐ (փոխարինող անդամ, Նիդեռլանդներ)  
 պրն Գերհարդ ՌԱՅՍՆԵՐ (ՄԻԳՏ-ի փորձագետ)  
 պրն Դուրո ՍԵՍՍԱ (ՄԻԳՏ-ի փորձագետ)**

Եզրակացությունը կազմվել է  
 Եվրոպական միության  
 համաֆինանսավորմամբ



*Սույն փաստաթուղթը հանդիպման ընթացքում մասնակիցներին չի տրամադրվելու:  
 Խնդրում ենք Ձեզ հետք բերել այս օրինակը:*

[www.venice.coe.int](http://www.venice.coe.int)

## Բովանդակություն

I.	Ներածություն .....	3
II.	Եզրակացության շրջանակը .....	4
III.	Բարեփոխումների ընդհանուր նկարագիրը.....	6
IV.	Ինստիտուցիոնալ փոփոխությունները .....	8
	Ա. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը .....	10
	Բ. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը .....	13
	Գ. Արդարադատության նախարարը .....	19
	Դ. Բարձրագույն դատական խորհուրդը .....	20
V.	Փոփոխություններ՝ դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ նյութաիրավական նորմերում.....	26
	Ա. Նոր վարքագծի կանոններ եւ կարգապահական պատասխանատվության նոր ձեւեր .....	27
	Բ. Դատարանի նախագահների հեռացումը՝ որպես կարգապահական տույժ.....	35
	Գ. Համալրումը եւ գնահատումը .....	37
VI.	Սահմանադրական դատարանի դատավորների վաղաժամ թոշակի անցնելը .....	39
VII.	Եզրակացություն .....	41

## I. Ներածություն

1. 2019 թվականի սեպտեմբերի 6-ի գրությամբ Հայաստանի արդարադատության նախարար պրն Ռուստամ Բադասյանը դիմել է Վենետիկի հանձնաժողով՝ դատաիրավական բարեփոխումների փաթեթի վերաբերյալ եզրակացություն պատրաստելու խնդրանքով, որը մշակվել է Նախարարության կողմից, եւ որում առաջարկվում են Դատական օրենսգրքի (ԴՕ), «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի, «Հանրային ծառայության մասին» օրենքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի եւ մի քանի այլ օրենքներում փոփոխություններ (CDL-REF(2019)023, այսուհետ՝ Փաթեթ)<sup>1</sup>: Նախարարությունը նաեւ տրամադրել է ԴՕ-ի համահավաք տարբերակը՝ դրանում ներառելով առաջարկվող փոփոխությունները (CDL-REF(2019)024): Ի վերջո, 2019 թվականի հոկտեմբերի 4-ին Նախարարությունը Վենետիկի հանձնաժողով է ներկայացրել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը՝ փոփոխություններով (CDL-REF(2010)022rev), որն Ազգային ժողովն ընդունել է երկրորդ ընթերցմամբ, եւ որը փոխարինում է Փաթեթում ընդգրկված միեւնույն օրենքում փոփոխությունների նախագծին:

2. Հայաստանի իշխանությունների դիմումի հիման վրա սույն եզրակացությունը կազմվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության (ՄԻԳՏ) հետ համատեղ: Պրն Էսանուն, պրն Հիրշֆելթը եւ պրն Կույջերը Վենետիկի Հանձնաժողովի անունից հանդես են եկել որպես սույն եզրակացության զեկուցողներ: ՄԻԳՏ-ի անունից որպես զեկուցողներ հանդես են եկել պրն Ռայսները եւ պրն Սեսսան:

3. Հանձնաժողովի պատվիրակությունը, որի կազմում էին պրն Էսանուն, պրն Հիրշֆելթը, պրն Կույջերը, Քարտուղարությունից՝ պրն Դիկովի ուղեկցությամբ, 2017 թվականի հուլիսի 16-17-ն այցելել է Երեւան եւ հանդիպել

<sup>1</sup> Փաթեթն ընդհանուր առմամբ ներառում է տասներեք օրենքներում փոփոխություններ:

պատգամավորների, գործադիր իշխանության մարմինների, դատավորների եւ այլ շահագրգիռ կողմերի, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

4. Սույն եզրակացությունը կազմվել է զեկուցողների կողմից կատարված զեկուցումների եւ իշխանությունների կողմից տրամադրված հղումային փաստաթղթերի (տե՛ս վերելում) թարգմանության հիման վրա: Ոչ ճշգրիտ թարգմանության հետեանքով սույն եզրակացության մեջ կարող են ի հայտ գալ անճշտություններ: Ավելին, պետք է նշել, որ բարեփոխումների փաթեթը այնպիսի տեքստ չէ, որը չի կարող փոփոխվել: Երեւան կատարած այցի ընթացքում զեկուցողները տեղեկացել են, որ Ազգային ժողովն ընդունել է որոշ փոփոխություններ, որոնք վերաբերում են Վենետիկի հանձնաժողով ներկայացված Կառավարության առաջարկներին (համեմատե՛ք CDL-REF(2019)023-ի 36 - 33 էջերը եւ CDL-REF(2019)022-ը եւ CDL-REF(2019)022rev): Սույն եզրակացությունը մշակելիս Վենետիկի հանձնաժողովն առավելագույն ջանքեր է գործադրել տիրող իրավիճակն արտացոլելու համար, սակայն չի կարող բացառվել, որ բոլորովին վերջերս կատարված որոշ փոփոխություններ ներառված չեն:

5. Սույն եզրակացությունն ուսումնասիրվել է Դատական իշխանության հարցերով ենթակոմիտեի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 10-ին անցկացված իր հանդիպման ընթացքում եւ հետագայում ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 120-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2019 թվականի հոկտեմբերի 11-12):

## **II. Եզրակացության շրջանակը**

6. Հաշվի առնելով ժամանակի սղությունը՝ կայացվել է որոշում այն մասին, որ սույն եզրակացության մեջ ուշադրությունը կկենտրոնացվի Փաթեթում ներկայացված ամենակարեւոր փոփոխությունների վրա: Այդ իսկ պատճառով,

դրանում համապարփակ չեն դիտարկվում ԴՕ-ն եւ մյուս օրենքներն ամբողջությամբ, որոնց մասով Փաթեթում փոփոխություններ են ներկայացվել: Եթե սույն եզրակացության մեջ որոշ խնդիրների մասով ոչինչ չի ասվում, ապա դա բոլորովին չի նշանակում, որ Վենետիկի հանձնաժողովը կողմ է համապատասխան փոփոխությունների կատարմանը<sup>2</sup>: Ավելին, Փաթեթում ձեւակերպված շատ առաջարկություններով ներկայացվում են հակակոռուպցիոն միջոցառումներ, հետեւաբար Վենետիկի հանձնաժողովը կոչ է անում Հայաստանի իշխանություններին շարունակել այս հարցերի վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի փորձագետների հետ խորհրդակցությունները: Սույն եզրակացության մեջ չեն դիտարկվելու դատական բարեփոխումների հետ կապված այլ հարցեր, ինչպես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը կամ մյուս հարակից օրենսդրական փոփոխությունները:

7. Փաթեթում ներկայացվում են ԴՕ-ում եւ «Սահմանադրական դատարանի մասին» (ՍԴ) օրենքում զուգահեռաբար կատարվող մի քանի փոփոխություն, մասնավորապես՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու եւ ֆինանսական տեղեկությունների տրամադրման պարտավորությունների մասով փոփոխությունները: ԴՕ-ի փոփոխությունների համատեքստում սույն եզրակացության մեջ արված դիտողությունները պետք է *mutatis mutandis* [համապատասխան փոփոխություններով] կիրառելի համարվեն ՍԴ-ի մասին օրենքում առաջարկվող համանման փոփոխությունների համար:

<sup>2</sup> Վենետիկի հանձնաժողովը Հայաստանի իշխանություններին առաջարկում է հաշվի առնել Հայաստանի դատական իշխանության վերաբերյալ իր նախկին եզրակացությունները, մասնավորապես՝ CDL-AD(2017)019 եզրակացությունը, որում առաջարկություններ են ներկայացվել թեմաների ավելի լայն շրջանակի վերաբերյալ, ինչպես նաեւ այն ընդունելուց հետո գնահատման նպատակով իրականացվող վերանայման եզրակացությունը, որը կազմվել է ՄԻԳՏ-ի փորձագետների կողմից 2018 թվականին:

### III. Բարեփոխումների ընդհանուր նկարագիրը

8. Ներկայիս դատական բարեփոխումները պետք է դիտարկվեն Հայաստանում վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների, ինչպես նաև այս ոլորտում Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկինում կատարված աշխատանքի համատեքստում:

9. 2015 թվականի դեկտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեի արդյունքում ընդունվել է Հայաստանի Սահմանադրության վերանայված տեքստը: Վերանայված Սահմանադրության ընդունումից հետո Հայաստանի կառավարությունը մշակել է ԴՕ-ի նախագիծ, որը ներկայացվել է Վենետիկի հանձնաժողով՝ գնահատելու նպատակով: 2017 թվականի հոկտեմբերին Վենետիկի հանձնաժողովն Օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրամադրել է եզրակացություն (2017 թվականի հոկտեմբերին տրված եզրակացություն)<sup>3</sup>: ԴՕ-ի վերջնական տարբերակն ընդունվել է 2018 թվականի փետրվարի 10-ին: Նոր ընդունված ԴՕ-ում ներառվել են 2017 թվականի հոկտեմբերին տրված եզրակացության մեջ ներկայացված առաջարկություններից շատերը, սակայն ոչ բոլորը: 2018 թվականի օգոստոսին Եվրոպայի խորհրդի փորձագետներն իրականացրել են ընդունմանը հաջորդող վերանայում, որի շրջանակներում նրանք ԴՕ-ի վերջնական տեքստը համեմատել են Վենետիկի հանձնաժողովի առաջարկությունների հետ:

10. Նոր ԴՕ-ն ուժի մեջ է մտել 2018 թվականի գարնանը տեղի ունեցած իրադարձություններից ոչ շատ առաջ, որոնք Հայաստանում հայտնի են որպես «թավշյա հեղափոխություն»: «Թավշյա հեղափոխության» արդյունքում տեղի է ունեցել նախկին Կառավարության հեղաշրջում, նախկին ընդդիմադիր առաջնորդ Նիկոլ Փաշինյանը նշանակվել է վարչապետ: Այն ավարտվեց 2018 թվականի Ազգային ժողովի ընտրություններում «Իմ քայլը» դաշինքի տպավորիչ հաղթանակով: «Իմ քայլը» դաշինքը, որը սատարում էր Նիկոլ Փաշինյանին, Ազգային ժողովում 132 տեղից ստացավ 88-ը (որը համարվում է

<sup>3</sup> CDL-AD(2017)019, Հայաստան. Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ եզրակացություն

սահմանադրական մեծամասնություն), մինչդեռ նախկինում իշխող Հանրապետական կուսակցությունը չստացավ որեւէ տեղ:

11. Ինչպես բացատրվել է զեկուցողներին, հայ հասարակությունը դժգոհ էր դատական իշխանությունում տիրող իրավիճակից, եւ դա «թավշյա հեղափոխության» պատճառներից մեկն էր: Առկա է այս ոլորտում արագ եւ տեսանելի փոփոխությունների մեծ հանրային պահանջ, որով էլ բացատրվում է այն հանգամանքը, թե ինչու է նոր Կառավարությունը որոշել ամենայն ուշադրությամբ ուսումնասիրել պետական իշխանության դատական ճյուղի կառուցվածքը:

12. Նոր Կառավարությունն Ազգային ժողովում կազմում է սահմանադրական մեծամասնություն: Ի սկզբանե դրա նպատակն է եղել նախաձեռնել արտահերթ վեթինգի ընթացակարգեր՝ առկա դատավորների համապատասխանությունը ստուգելու համար: Այնուհանդերձ, չնայած ընտրություններից հետո ձեռք բերված լայն քաղաքական մանդատին, Կառավարությունը զերծ մնաց անզիջում մոտեցում կիրառելուց եւ, փոխարենը, երկխոսության մեջ մտավ հայ հասարակության եւ իր միջազգային գործընկերների հետ: Դատական իշխանության համապարփակ վեթինգ նախատեսող նախնական ծրագիրը քննարկվել է Եվրոպայի խորհրդի ներկայացուցիչների հետ 2019 թվականի առաջին կեսին: Տեղական մակարդակում առաջարկվող փոփոխությունը դրվել է հանրային քննարկման. քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, դատական համայնքից եւ այլ շահագրգիռ կողմերից ստացված տվյալների հիման վրա առաջարկվող տեքստում կատարվել են մի շարք փոփոխություններ: Շատ ՀԿ-ներ, որոնց հանդիպել է պատվիրակությունը Երեւանում, գոհունակությամբ նշել են Փաթեթի պատրաստման գործընթացի թափանցիկությունը եւ ներառական բնույթը:

13. Այս երկխոսության արդյունքում հեռացվել են բարեփոխման համար ներկայացված ամենաձայրահեղ առաջարկությունները, եւ Կառավարությունը մշակել է առավել անհատական լուծումներ: Վենետիկի հանձնաժողովը ողջունում է այս մոտեցումը եւ կոչ է անում Կառավարությանը հետագա բարեփոխումներն իրականացնել երկխոսության եւ ներառականության միեւնույն ոգով:

14. Վենետիկի հանձնաժողով ներկայացված Փաթեթը հիմնականում վերաբերում է դատավորների ֆինանսական հայտարարագրերի ստուգման, նրանց կարգապահական պատասխանատվության եւ պարբերական գնահատումների ընթացակարգում կատարվող փոփոխություններին: Բացի այդ, Փաթեթում Սահմանադրական դատարանի դատավորների համար ներկայացվում է վաղաժամ թոշակի անցնելու հնարավորություն, որը սույն եզրակացության մեջ կդիտարկվի առանձին<sup>4</sup>: Փաթեթում առկա օրենսդրական փոփոխությունների ընդհանուր գնահատականն ակնհայտորեն դրական է: Առաջարկվող մեխանիզմների արդյունքում մեծանում է դատավորների հաշվետվողականությունը, եւ դրանք ավելի արդյունավետ են դառնում կոռուպցիայի կանխարգելման գործում՝ միեւնույն ժամանակ անհամաչափորեն չսահմանափակելով դատավորների անկախությունը: Սույն եզրակացության մեջ որոշ քննադատական դիտողություններ չպետք է դիտարկել որպես Փաթեթի ընդհանուր դրական գնահատականը նսեմացնող դիտարկում:

#### **IV. Ինստիտուցիոնալ փոփոխությունները**

15. Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է, որ Հայաստանի Սահմանադրությամբ դատական կառավարման համակարգի կենտրոնական մարմինը Բարձրագույն դատական խորհուրդն է (ԲԴԽ): Այն կազմված է տասն

<sup>4</sup> Եթե հարցման մասնակիցները մտահոգություն են հայտնել Փաթեթի առնչությամբ, ապա այն հիմնականում վերաբերում է Սահմանադրական դատարանի դատավորների վաղաժամ թոշակի անցնելու հնարավորությանը:



անդամից՝ դրա հինգ անդամներին ընտրում են իրենց կոլեգաները, իսկ մյուս հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ ձայների որակյալ մեծամասնությամբ, «հեղինակավոր իրավաբանների» թվից (Հայաստանի Սահմանադրության 174-րդ հոդվածի 1-3-րդ մասեր): ԲԴԽ-ի կազմն ամրագրված է Սահմանադրության մեջ եւ, հետեւաբար, առաջարկվող բարեփոխմամբ մնում է անփոփոխ: Այս կազմը համապատասխանում է դատավորների «զգալի» մասնակցության նվազագույն չափանիշին (որն առաջարկվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից շատ եզրակացություններում եւ զեկույցներում)<sup>5</sup> եւ Նախարարների խորհրդի առաջարկության մեջ սահմանված շեմին<sup>6</sup>:

16. Սահմանադրության 174-րդ հոդվածում նշվում է նաեւ Դատավորների ընդհանուր ժողովի (ԸԺ) մասին, որը կազմված է Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորներից: Համաձայն գործող ԴՕ-ի՝ ԸԺ-ն ձեւավորում է մասնագիտացված հանձնաժողովներ, մասնավորապես՝ Կարգապահական հարցերի հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են տարբեր ատյանների դատավորներ: Այս հանձնաժողովը լիազորված է (Արդարադատության նախարարի հետ համատեղ) դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցել ԲԴԽ-ում, որը, սակայն, կարգապահական հարցերով վերջին ատյանն է:

17. Փաթեթում առաջարկվում է փոփոխել այս մասնագիտացված հանձնաժողովներից մի քանիսի կազմը եւ գործառույթները, մասնավորապես՝ կարգապահական վարույթի համատեքստում: Համաձայն առաջարկվող փոփոխությունների՝ լինելու են երեք մարմիններ, որոնք ԲԴԽ-ում կարող են հարուցել կարգապահական վարույթ. ԸԺ-ի էթիկայի եւ կարգապահական

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, CDL-AD(2007)028, «Դատավորների նշանակման մասին» Վենետիկի հանձնաժողովի զեկույց, 29-րդ պարբերություն: Տե՛ս նաեւ CDL-AD(2008)006, «Սերբիայի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ եզրակացություն, 76-րդ պարբերություն:

<sup>6</sup> CM/Rec(2012)12, էջ 27 («այսպիսի խորհուրդների անդամների առնվազն կեսը պետք է լինեն իրենց կոլեգաների կողմից ընտրված դատավորներ»):

հարցերի հանձնաժողովը (ԷԿՀ, Կարգապահական հարցերի հանձնաժողովի իրավահաջորդը), Արդարադատության նախարարը եւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ-ն՝ որոշ հիմքերով, որոնք առնչվում են դատավորների ֆինանսական հայտարարագրերին): Այս երեք մարմինները կարող են գործեր հարուցել *proprio motu* [սեփական նախաձեռնությամբ] կամ բողոքների, մամուլում հրապարակված տեղեկությունների հիման վրա եւ այլ հիմքերով: Նրանք կարող են իրականացնել ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ արված հայտարարությունների մասով փաստական հանգամանքների նախնական ուսումնասիրություն: Այս մարմինները հանդես են գալիս որպես դատավորների նկատմամբ բերված անընդունելի բողոքները «զտողներ»: Եթե ԷԿՀ-ն մերժում է որեւէ բողոք, ապա այն դեռեւս կարող է ներկայացվել Նախարարի կողմից եւ *հակառակը*: Կարգապահական պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ որոշումը կայացվում է ԲԴԽ-ի կողմից մրցակցային դատավարությունից հետո պարզ կամ որակյալ մեծամասնությամբ (կախված պատժի խստության աստիճանից): Ի վերջո, ԲԴԽ-ի որոշումները ենթակա չեն լինի բողոքարկման ընդհանուր իրավասության դատարանում, սակայն նախատեսվելու է հենց ԲԴԽ-ի կողմից ԲԴԽ-ի որոշումների վերանայման հատուկ ընթացակարգ:

#### **Ա. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովը**

ա. Էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմը

18. ԴՕ-ի նախագծում ԷԿՀ-ի կազմը փոփոխվում է: Չնայած ԷԿՀ-ին նախորդող մարմինը (Կարգապահական հարցերի հանձնաժողովը) կազմված էր միայն տարբեր ատյանների դատավորներից, ԷԿՀ-ն այժմ բաղկացած է լինելու 8 անդամից՝ հինգ դատավորի եւ դատավոր չհանդիսացող երեք անդամի կազմով: Դատավոր չհանդիսացող անդամները կներառեն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի մեկ ներկայացուցիչ եւ այդ ոլորտում գործունեություն

իրականացնող ՀԿ-ների երկու ներկայացուցիչ: ՀԿ-ները ներկայացնող՝ դատավոր չհանդիսացող անդամներն ընտրվում են ԲԴԽ-ի կողմից. պարզ չէ, սակայն, նրանք պատվիրակվում են ուղղակիորեն ԲԴԽ-ի կողմից, թե ամեն դեպքում անհրաժեշտ է ԸԺ-ի հաստատումը: Նույնը վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ դատավոր չհանդիսացող անդամին:

19. ԷԿՀ-ի կազմում դատավոր չհանդիսացող անդամների ներառման գաղափարը գովելի է, քանի որ դրանով այս հանձնաժողովի գործունեությունը որոշակի արտաքին ուսումնասիրության համար ավելի բաց է դառնում: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե ինչու Վճռաբեկ դատարանի դատավորները (ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն դատարանը) չեն կարող լինել ԷԿՀ-ի անդամ՝ չնայած այն հանգամանքին, որ այս դատավորները սովորաբար ամենաշատ փորձառություն ունեցողներն են: Առաջարկված մոդելը կարող է թերեւս բացատրվել դատական համակարգում ավագ դատավորների ոչ ֆորմալ ազդեցությունը նվազեցնելու ցանկությամբ<sup>7</sup>: Այս մոդելը չի հակասում Եվրոպական չափանիշներին, սակայն Վենետիկի հանձնաժողովը կոչ է անում իշխանություններին գնահատել այն, թե արդյոք Վճռաբեկ դատարանի դատավորներին ընդհանրապես չներգրավելը արդարացված է Հայաստանի համատեքստում<sup>8</sup>:

20. Այնուհետեւ, ԷԿՀ-ի կազմում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից անդամի ներկայությունը կարող է հարցեր առաջացնել: Նախ եւ առաջ՝ Մարդու իրավունքների պաշտպանի դերի եւ դատական իշխանության համադրելիության հարցը վիճելի է<sup>9</sup>: Երկրորդ՝ առկա է ռիսկ այն մասով, որ

<sup>7</sup> Ներքին դատական անկախության հարցը մասնավորապես բարձրացվել է Հայաստանի դատական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ համատեղ զեկույցում (դատավորների գնահատման համակարգ), CDL-AD(2014)007, 11-19-րդ եւ 126-127-րդ պարբերություններ:

<sup>8</sup> Ինչպես նշվել է իշխանությունների կողմից, գործող Դատական օրենսգրքով նույնպես չի նախատեսվում Կարգապահական հարցերի հանձնաժողովում Վճռաբեկ դատարանի ներգրավվածություն:

<sup>9</sup> Վենետիկի սկզբունքներում (CDL-AD(2019)005, Օմբուդսմենի կառույցի պաշտպանության եւ դերի բարձրացման սկզբունքները) Հանձնաժողովը նշել է, որ «Օմբուդսմենի՝ դատական իշխանության հետ կապված իրավասությունը պետք է սահմանափակվի ընթացակարգային

միեւնույն անձին կարող են միաժամանակ ներգրավել որոշ փաստերի քննության մեջ թե՛ որպես Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի անդամ եւ թե՛ որպես ԷԿՀ-ի անդամ: Եթե անհրաժեշտ է, որ Մարդու իրավունքների պաշտպանն ունենա դերակատարում այդ կառույցում, ապա այն կարող է սահմանափակվել փորձագետի թեկնածուի (որն իր գրասենյակի անդամ չէ)՝ ԷԿՀ-ում որպես դատավոր չհանդիսացող անդամներից մեկի առաջադրմամբ հանդես գալու համար:

բ. Էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից տրամադրվող խորհրդատվական բնույթի եզրակացությունները

21. ԷԿՀ-ին նախորդող մարմինն ուներ վարքագծի կանոնների մեկնաբանության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ տրամադրելու իրավասություն: Այս գաղափարը քննադատվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 2017 թվականի հոկտեմբերին տրված եզրակացության մեջ, քանի որ միեւնույն մարմինը դատավորներին խորհուրդ էր տալիս կոնկրետ իրավիճակներում եւ միաժամանակ ուներ ԲԴԽ-ում նրանց նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն (էջ 62): Համաձայն ԴՕ-ի նախագծի՝ ԷԿՀ-ն լիազորված կլինի տրամադրելու վարքագծի կանոնների վերաբերյալ (66-րդ հոդվածի 4-րդ մասի) եւ էթիկայի կանոնների վերաբերյալ (68-րդ հոդվածի 4-րդ մաս) խորհրդատվական բնույթի մեկնակաբանություններ: Հետեւաբար, 2017 թվականի հոկտեմբերի եզրակացության մեջ արված առաջարկությունները հաշվի չեն առնվել: Նույնիսկ ԷԿՀ-ի կողմից էթիկայի կանոնների վերաբերյալ խորհուրդ տալը կարող է խնդրահարույց լինել, քանի որ էթիկայի վարքագծի սկզբունքների եւ կարգապահական կարգավորումների սկզբունքների միջեւ մշտապես կարող է լինել փոխադարձ կապ<sup>10</sup>: Ինչպես նշվել է 2017 թվականի հոկտեմբերի եզրակացության մեջ, ավելի լավ լուծում կլիներ ԸԺ-ի

արդյունավետությամբ եւ այդ համակարգի վարչական գործունեությամբ»:

<sup>10</sup> Տե՛ս ԵԴԽԽ-ի թիվ 3 եզրակացությունը, մասնավորապես՝ էջ 49, որում առաջարկվում է կարգապահական պատասխանատվությունը տարանջատել դատավորների էթիկայի կանոններից:

կազմում խորհրդատվական գործառույթով օժտված՝ էթիկայի հարցերով խորհրդականի առանձին պաշտոն ստեղծելը կամ այդ խնդիրն ԷԿՀ-ի ամենաշատ փորձառություն ունեցող դատավոր անդամներից մեկին հանձնարարելը՝ պայմանով, որ այս անդամն առնչություն չի ունենալու դատավորների ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագծի վերաբերյալ կոնկրետ բողոքների հետ:

## **Բ. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը**

ա. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմը

22. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» (ԿԿՀ) նոր օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ: Այն փոխարինում է Փաթեթում առկա միեւնույն օրենքում առաջարկվող փոփոխությունները: Ինչպես բացատրվել է զեկուցողներին, ԿԿՀ-ի մասին օրենքում կատարված փոփոխությունների անհապաղ ընդունումը պայմանավորված էր այս մարմնի գործունեությունը հնարավորինս շուտ ապահովելու անհրաժեշտությամբ: ԿԿՀ-ի մասին օրենքն ընդունվել է 2017 թվականին: Համաձայն օրենքի 2-րդ հոդվածի՝ ԿԿՀ-ն «ինքնավար պետական մարմին» է, որը կազմված է հինգ անդամից: Այդ անդամներն ընտրվում են Ազգային ժողովի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ<sup>11</sup>: 2017 թվականի հունիսին ընդունված ԿԿՀ-ի մասին օրենքում նախատեսվել է «մրցութային խորհրդի» ստեղծում՝ կոլեգիալ մարմին, որի գործառույթն է, ըստ օրենքի 11-րդ հոդվածի, անցկացնել մրցույթ, ընտրել համապատասխան թեկնածուներ եւ Ազգային ժողովի հաստատմանը ներկայացնել նրանց թեկնածությունը: Սակայն քաղաքական եւ տեխնիկական գործոնների պատճառով խորհուրդը չի անցկացրել մրցույթ եւ չի առաջարկել թեկնածուներ:

<sup>11</sup> Տե՛ս Սահմանադրության 122-րդ հոդվածի 2-րդ մասը եւ ԿԿՀ-ի մասին օրենքի 9-րդ հոդվածի սկզբնական տարբերակը. 9-րդ հոդվածն այս առումով այնքան էլ հստակ չէ, սակայն Վենետիկի հանձնաժողովը ենթադրում է, որ ԿԿՀ-ի անդամների նշանակման մասին վերջնական որոշումը պետք է կայացնի Ազգային ժողովը, քանի որ դա բոլոր ինքնավար մարմինների համար Սահմանադրությամբ ամրագրված պահանջ է:

Արդյունքում ԿԿՀ-ն չի ձեռավորվել: Այսպիսի հանգամանքներում Ազգային ժողովը որոշել է ԿԿՀ-ի մասին օրենքի փոփոխություններն իրականացնել առանձին՝ մինչև Կառավարության կողմից Փաթեթի մնացած մասի հաստատումը:

23. ԿԿՀ-ի մասին նոր օրենքում մրցութային խորհուրդն առնչություն չունի ԿԿՀ-ի անդամներ նշանակելու գործընթացի հետ, եւ ներկայացվում է թեկնածուների ուղղակի առաջադրման համակարգ՝ մեկ թեկնածու առաջադրվելու է Կառավարության կողմից, մեկ թեկնածու ընտրվելու է Ազգային ժողովի իշխող կուսակցության կողմից, երկու թեկնածու ընտրվելու է Ազգային ժողովի երկու ընդդիմադիր կուսակցությունների կողմից եւ մեկ թեկնածու ընտրվելու է ԲԴԽ-ի կողմից<sup>12</sup>: Թե ինչպես է առաջադրող մարմինն առաջադրելու թեկնածու, կարգավորված չէ (այսինքն՝ թեկնածուների մրցութի հրապարակային հրավերի եւ մրցութ անցկացնելու արդյունքում, թե՛ ոչ):

24. Վեներտիկի հանձնաժողովը գիտակցում է, որ ԿԿՀ-ում թեկնածուների ուղղակի առաջադրման առաջարկվող համակարգն անհրաժեշտ է եղել հետագայում փակուղում հայտնվելուց խուսափելու համար: Ազգային ժողովում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում զեկուցողները հասկացել են, որ ընդդիմությունն ընդունել է այս նոր համակարգը: Հետեաբար, առաջարկությունը թերեւս քաղաքական փոխզիջման արդյունք է: Եթե Ազգային ժողովը հաստատում է բոլոր թեկնածությունները, ապա ԿԿՀ-ի կազմը քաղաքական տեսանկյունից կլինի հավասարակշռված. Կառավարության/մեծամասնության կողմից առաջադրված երկու անդամ, ընդդիմության կողմից առաջադրված երկու անդամ եւ ԲԴԽ-ի կողմից առաջադրված մեկ անդամ, որը հանդես է գալիս որպես արբիտր:

25. Ամփոփելով կարելի է ասել, որ քաղաքական ուժերի ներկայիս դասավորվածության պայմաններում թեկնածուների առաջադրման նոր համակարգը թերեւս ընդունելի է: Հարցն այն է, սակայն, արդյոք այս համակարգը

<sup>12</sup> Տե՛ս 1-ին եւ 2-րդ հոդվածները, ինչպես նաեւ 9-րդ հոդվածը, եզրափակիչ եւ անցումային դրույթները:

կգործի հաջորդ ընտրական փուլում: Այժմ Ազգային ժողովում գոյություն ունի միայն երկու ընդդիմադիր խմբակցություն, եւ նրանցից յուրաքանչյուրը կարող է առաջադրել մեկական թեկնածու՝ անկախ խմբակցության անդամների թվից: Այնուհանդերձ, եթե հաջորդ Ազգային ժողովում լինեն երկուսից ավելի ընդդիմադիր խմբակցություններ, ինչպե՞ս պետք է նրանք առաջադրեն երկու թեկնածու (հինգից) «ընդդիմության քվտայի» շրջանակներում: Այս դեպքում օրենքով պետք է նախատեսվի դաշինքի քվեարկության ինչ-որ ձեւ: Ավելին, օրենքում որեւէ նշում չկա այն մասին, թե ինչ է լինելու, երբ Ազգային ժողովում ընդդիմության կողմից առաջադրված թեկնածուները չընտրվեն ձայների մեծամասնությամբ. կարող է արդյոք ԿԿՀ-ն գործել առանց «ընդդիմադիր» թեկնածուների, եւ ինչ կպատահի, եթե ընդդիմության թեկնածուներին Ազգային ժողովում անընդմեջ դեմ են քվեարկում:

26. Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է, որ «Ժողովրդավարական կարգում խորհրդարանական մեծամասնության եւ ընդդիմության միջեւ փոխհարաբերության պարամետրեր»<sup>13</sup> վերնագրով փաստաթղթում առաջարկվել է խորհրդարանական կոմիտեներում համամասնական ներկայացուցչության սկզբունքը: Ամենակարեւոր կոմիտեների դեպքում, օրինակ այն կոմիտեները, որոնք պատասխանատու են բյուջեի կամ անվտանգության ծառայությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար, առաջարկվում է այդ տեղերը վերապահել ընդդիմությանը՝ նույնիսկ դուրս գալով Ազգային ժողովում դրա իրական ներկայացվածության շրջանակից կամ ընդդիմությանը տալով հանձնաժողովի նախագահի պաշտոններ: ԿԿՀ-ն խորհրդարանական կոմիտե չէ, սակայն, հաշվի առնելով այս մարմնի կարեւորությունը, պետք է կիրառվի մեծ առումով նմանատիպ սկզբունք: Ոչինչ չի խանգարում օրենսդիրներին, որպեսզի թեկնածուների առաջադրման գործընթացում ընդդիմությանը վերապահեն իմաստալից դեր (հավանաբար վերադառնալով այժմ վերացված «մրցութային խորհրդի» համանմանությամբ

<sup>13</sup> CDL-AD(2019)015, 86-րդ պարբերություն:

կոլեգիալ առաջադրման մարմնի գաղափարին, որով կապահովվի թեկնածուների առաջադրման ավելի քիչ քաղաքականացված գործընթացը), թեպետ վերջնական որոշումը կայացվում է Ազգային ժողովի ձայների պարզ մեծամասնությամբ: Ամփոփելով կարելի է ասել, որ օրենքի ներկայիս տարբերակը կարելի է համարել ընդունելի որպես ժամանակավոր լուծում, որին ես մեկ անգամ պետք է անդրադառնալ այն բանից հետո, երբ ԿԿՀ-ն սկսի գործել:

բ. Դատավորների առնչությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները

27. Վենետիկի հանձնաժողովն այժմ կանդրադառնա ԿԿՀ-ի նոր՝ դատավորների ֆինանսական հայտարարագրերի (գույքի, եկամուտների եւ շահերի մասին հայտարարագրերի) ստուգմանը եւ անճշտություններով ներկայացված հայտարարագրերի հիմքով նրանց նկատմամբ ԲԴԽ-ում վարչական վարույթ հարուցելու լիազորությանը: Այս առումով հնարավոր է երկու լուծում՝ կա՛մ դատական իշխանության *շրջանակներում* ստեղծել հատուկ մարմին, որը պատասխանատու կլինի դատավորների ֆինանսական հայտարարագրերը ստուգելու համար, կա՛մ այս գործառույթը վերապահել *արտաքին* մարմնին, որը զբաղվում է բոլոր պետական մարմինների հայտարարագրերի ստուգմամբ: Առաջին տարբերակը լավ է դատավորների անկախության տեսանկյունից, սակայն դրանում բացակայում է թափանցիկությունը, որի հետեւանքով կարող է դրսեւորվել կորպորատիվ վարքագիծ: Այսպիսով, Փաթեթը մշակողները նախընտրել են երկրորդ մոդելը. հենց ԿԿՀ-ն է ստուգում դատավորների ֆինանսական հայտարարագրերն այլ պետական պաշտոնատար անձանց հետ հավասար հիմունքներով, եւ որն այժմ ունի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն:

28. Դժվար է այս հարցերով գտնել ընդհանուր եվրոպական չափանիշ: Որոշ փաստաթղթերում առաջարկվում է, որ միայն դատական մարմինը պետք է ունենա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու



լիազորություն<sup>14</sup>: Այլ մարմիններ ընդունում են, որ դատավորների կողմից ֆինանսական հաշվետվությունների ստուգումը կարող է իրականացվել արտադատական մարմնի կողմից<sup>15</sup>: Վենետիկի հանձնաժողովի կարծիքով, արտաքին մարմին (որը գործ ունի բոլոր պետական պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատավորների հետ) կամ դատական իշխանության կազմում ընդգրկված հատուկ մարմին հայտարարագրերի ստուգման գործառույթը վերապահելու հարցը պայմանավորված է մասնավոր իրողություններով: ԵԴԽԽ-ի թիվ 21 եզրակացության 50-րդ էջում ընդգծվում է այն փաստը, որ «[...] առաջնային կարելություն ունի այն բացարձակապես վարկաբեկող տպավորությունից խուսափելը, որ որքան ավելի բարձր է ենթադրաբար կոռումպացված բարձրաստիճան պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը, որքան ավելի խելացի է եւ ավելի շատ է պաշտպանված նա, այնքան ավելի շատ է օգտվում փաստացի անձեռնմխելիությունից: Կախված տվյալ երկրի պատմությունից, ավանդույթներից եւ վարչական կառուցվածքից, ինչպես նաեւ համակարգում առկա կոռուպցիայի ծավալից՝ կարող է ի հայտ գալ հատուկ քննչական մարմիններ եւ հատուկ գործերով դատախազներ ունենալու անհրաժեշտություն՝ դատավորների շրջանում առկա կոռուպցիայի դեմ պայքարելու համար: [...]»: Այսպիսով, ամենակարեւոր հարցն այն չէ, թե ով է *հարուցում* վարչական վարույթը, այլ՝ ով է կայացնում դատավորին

<sup>14</sup> Տե՛ս «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիան, որը հաստատվել է 1998 թվականին 13 եվրոպական դատական իշխանությունների ներկայացուցիչների հանդիպման ընթացքում, որում ներկայացվում է «ընտրված դատավորների առնվազն կեսից կազմված տրիբունալը կամ մարմինը»:

<sup>15</sup> Տե՛ս ԵԴԽԽ-ի թիվ 21 եզրակացությունը (Դատավորների շրջանում կոռուպցիայի կանխարգելումը), էջ 37: «ԳՐԵԿՈՆ իր վերոնշյալ Գնահատման չորրորդ փուլում մի շարք երկրներին առաջարկություններ է ներկայացրել գույքի հայտարարագրման համակարգի գործարկման կամ բարելավման վերաբերյալ՝ պարբերաբար՝ տարեկան կտրվածքով դատավորների եկամուտների եւ այլ գույքի՝ համապարփակ ձեռով գրանցումն ապահովելու համար: ԳՐԵԿՈՆ-ն նաեւ առաջարկում է դատական իշխանության կազմում կամ դրանից դուրս ունենալ հատուկ մարմին, որը պետք է հետեւի, որ այդ հայտարարագրերը ներկայացվեն ժամանակին եւ ճիշտ: Այս կանոնները չկատարելը որոշ երկրներում կարող է դիտարկվել որպես վարչական խախտում կամ կարգապահական իրավախախտում: Որոշ երկրներ գույքի հայտարարագրման պահանջ են ներկայացնում նաեւ դատավորների ամուսիններին եւ այլ մերձավոր ազգականներին: Որոշ դեպքերում բոլոր դատավորների կամ նրանցից ոմանց հայտարարագրերը հասարակության համար հասանելի են:»

կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վերջնական որոշումը: Հայաստանի համատեքստում ԲԴԽ-ն եւ ոչ թե ԿԿՀ-ն է որոշում, թե արդյոք դատավորը կատարել է գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագրման պարտականությունը, թե՛ ոչ: Ամփոփելով կարելի է ասել, որ Փաթեթում առաջարկված լուծումը, այսինքն՝ ԿԿՀ-ն կարող է ԲԴԽ-ի ուշադրությունը հրավիրել դատավորների ֆինանսական հայտարարագրերում առկա անհամապատասխանությունների հիմքով հարուցված կարգապահական վարույթների վրա, ընդունելի է<sup>16</sup>:

29. Վենետիկի հանձնաժողովը գիտակցում է, որ դատավորների եւ նրանց մերձավոր ազգականների կողմից ներկայացված ֆինանսական հայտարարագրերի ստուգման գործընթացում ԿԿՀ-ը ունենալու է որոշակի քննչական լիազորություններ, օրինակ՝ պետական մարմիններից եւ որոշ ֆինանսական հաստատություններից տեղեկություններ ստանալու լիազորություն (տե՛ս ԿԿՀ-ի մասին օրենքի 25-րդ հոդվածը): Ավելին, համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում կատարված փոփոխությունների՝ ԿԿՀ-ի կողմից պահանջված տեղեկությունները «կապված [իր] գործառույթների կատարման հետ» չեն համարվելու բանկային գաղտնիքի հրապարակում: Հարցն այն է, թե ԿԿՀ-ի քննչական լիազորությունները կարող են արդյոք ազդել դատավորների անձնական կյանքի անձեռնմխելիության վրա, եւ ինչպես խուսափել այս լիազորությունների կամայական օգտագործումից: Մասնավորապես, ԿԿՀ-ի համար կարող է թույլատրելի լինել դատավորի ֆինանսների վերաբերյալ որոշակի *ընդհանրացված* տեղեկությունների ձեռքբերումը, օրինակ՝ նրա բանկային հաշիվների, որոշակի ժամանակահատվածում դրանց վրա առկա գումարների շարժի կամ կոնկրետ խոշոր վճարումների մասին: Միեւնույն ժամանակ, դատավորի կողմից կատարված հնարավոր յուրաքանչյուր ամենափոքր գործարքի վերաբերյալ մանրամասն տեղեկություններին ԿԿՀ-ի անսահմանափակ հասանելիության ապահովումը թերեւս չափազանց է: Այս տեղեկությունների

<sup>16</sup> Վենետիկի հանձնաժողովը չի ուսումնասիրել ԿԿՀ-ի՝ դատավորների ֆինանսական հայտարարագրերի ստուգման հետ կապված կոնկրետ քննչական լիազորությունները:

արդյունքում կարող են ի հայտ գալ մանրամասներ դատավորի (*a fortiori* [առավել եւ] նրա մերձավոր ազգականների) անձնական կյանքի մասին, որոնք առնչություն չունեն ԿԿՀ-ի լիազորությունների հետ: Եթե պետք է ձեռք բերել այդպիսի տեղեկություն, ապա դա կարելի է անել քրեական գործով քննության շրջանակներում՝ ապահովելով բոլոր համապատասխան դատավարական երաշխիքները («հնարավոր պատճառ» պայման, դատական կարգադրություն եւ այլն): Ինչ վերաբերում է հայտարարագրերի ստուգման գործընթացին, օրենքում պետք է ավելի հստակ նշել, թե ինչ տեղեկություններ կարող է եւ չի կարող պահանջել ԿԿՀ-ը: Վերոնշյալ դիտարկումները չպետք է խոչընդոտեն ԿԿՀ-ի՝ ֆինանսական վիճակի եւ կարեւոր գործարքների վերաբերյալ ընդհանրացված տվյալներին, ինչպես նաեւ դատավորների գույքի վերաբերյալ հարկային մարմինների, պետական գրանցամատյանների եւ ֆինանսական հաստատությունների տեղեկություններին ուղղակի հասանելիությունը՝ 2015 թվականի գնահատման չորրորդ փուլի շրջանակներում ԳՐԵԿՈ-ի առաջարկությանը համապատասխան (տե՛ս 231-րդ պարբերությունը եւ xviii առաջարկությունը, ըստ որի՝ ԿԿՀ-ն պետք է կարողանա «մանրամասն ստուգել դատավորների հայտարարագրերը»): Հայաստանի իշխանությունները նշել են, որ նրանք կփորձեն այս հարցի շուրջ հետազայում էլ համագործակցել ԳՐԵԿՈ-ի հետ, եւ Վենետիկի հանձնաժողովը ողջունում է դա:

#### **Գ. Արդարադատության նախարարը**

30. Երրորդ դերակատարը, որը կարող է ԲԴԽ-ում կարգապահական վարույթ հարուցել, Արդարադատության նախարարն է: Վենետիկի հանձնաժողովը կարեւոր դիտարկումներ է կատարել Չեռնոգորիայի անալոգային դրույթի առնչությամբ. «99-րդ հոդվածով Արդարադատության նախարարին տրվում է դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը: Հարց է առաջանում՝ արդյոք սա համահունչ է դատական

իշխանության անկախության եւ իշխանությունների բաժանման սկզբունքի հետ»:<sup>17</sup> Այնուամենայնիվ, 2017 թվականի հոկտեմբերի եզրակացության մեջ<sup>18</sup> (տե՛ս 136-րդ պարբերությունը) Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ Նախարարը կարող է ԲԴԽ-ում կարգապահական վարույթ հարուցել Կարգապահական հարցերի հանձնաժողովի հետ հավասար հիմունքներով, եւ քանի որ Նախարարը որեւէ դերակատարում չունի որոշումների կայացման գործընթացում, կարգապահական վարույթի հարուցման փուլում Արդարադատության նախարարի ներգրավումը առարկելի չէ:<sup>19</sup> Միեւնույն ժամանակ, քանի որ ԷԿՀ-ի կազմը շատ ավելի բազմաբնույթ է՝ ի տարբերություն նախորդ մարմնի, հնարավոր է նախատեսել Նախարարի լիազորության դադարեցում այն բանից հետո, երբ նոր համակարգը պատրաստ լինի եւ գործարկվի:

#### **Դ. Բարձրագույն դատական խորհուրդը**

31. Ինչպես նշվել է Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասում, կարգապահական պատասխանատվության ոլորտում ԲԴԽ-ն «հանդես է գալիս որպես դատարան»: Այս սահմանադրական դրույթը ԴՕ-ում էլ ավելի մանրամասն կարգավորում է ստացել. դրանով ապահովվում է կարգապահական ընթացակարգերի մրցակցային բնույթը եւ երաշխավորվում են տվյալ դատավորի դատավարական իրավունքները (տե՛ս ԴՕ-ի 19-րդ գլուխը, մասնավորապես՝ 151-րդ հոդվածը): Ավելին, ԲԴԽ-ի անդամներն օգտվում են իրենց անկախության որոշ հիմնական երաշխիքներից (տես 14-րդ գլխում սահմանված՝ նրանց նշանակման, պաշտոնավարման ժամկետի վերաբերյալ կանոնները եւ այլն): Այսպիսով, կարգապահական հարցերում ԲԴԽ-ի դերն ընդհանուր առմամբ համատեղելի է CM/Rec(2010)12 առաջարկության հետ (էջ 9), որում նշվում է, որ կարգապահական վարույթը «պետք է իրականացվի անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ ապահովելով արդար դատաքննության բոլոր

<sup>17</sup> CDL-AD(2014)038, 68-րդ պարբերություն:

<sup>18</sup> Տե՛ս 136-րդ պարբերությունը:

<sup>19</sup> CDL-AD(2017)019:

երաշխիքները [...]»,<sup>20</sup> եւ ԵԴԽԽ-ի թիվ 21 եզրակացության հետ, որում առաջարկվում է, որ «կարգապահական վարույթը պետք է մշտապես իրականացվի դատական մարմնի կողմից՝ ըստ էության (օրինակ՝ կարգապահական հանձնաժողով կամ դատարան կամ բարձրագույն դատական խորհրդի ճյուղ)»: Մեկ խնդիր, սակայն, դեռեւս մնում է չլուծված՝ ԲԴԽ-ի՝ կարգապահական հարցերով որոշումներն ընդհանուր իրավասության դատարան բողոքարկելու հնարավորության բացակայությունը:<sup>21</sup>

ա. Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական հարցերով որոշումների բողոքարկումը

32. Առաջարկվող փոփոխություններում առկա է ԲԴԽ-ի որոշումների «բողոքարկման» վերաբերյալ նոր դրույթ (տե՛ս նոր 156-1-րդ հոդվածը): Այնուամենայնիվ, դժվար է այս մեխանիզմը բնութագրել որպես պատշաճ «բողոքարկում»: Այն ավելի շուտ նման է միեւնույն մարմնի (ԲԴԽ) կողմից նոր երեւան եկած հանգամանքների հիմքով նախկինում լուծված գործի վերաբացման:<sup>22</sup> Ինքնին «բողոք» հասկացությամբ ենթադրվում է որոշման օրինականության եւ հիմնավորվածության նկատմամբ մեկ այլ մարմնի կողմից հսկողություն՝ հիմք ընդունելով միեւնույն (եւ ոչ թե նոր երեւան եկած) փաստերը եւ ապացույցները: Հետեւաբար, առաջարկվող մեխանիզմը չի կարող փոխարինել բողոքին՝ այդ բառի բուն իմաստով:

<sup>20</sup> Այս մեջբերման երկրորդ մասի՝ տույժը բողոքարկելու դատավորի իրավունքի առնչությամբ, տե՛ս ստորեւ:

<sup>21</sup> Այլ առումներով Վենետիկի հանձնաժողովը Հայաստանի իշխանության մարմինների համար հղում է կատարում 2017 թվականի հոկտեմբերին տրված եզրակացությանը, մասնավորապես՝ 140-րդ պարբերության մեջ արված դիտարկմանը, որ ԲԴԽ-ի անդամների 2/3 մեծամասնությունը, որն անհրաժեշտ է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, կարող է շատ բարձր շեմ լինել:

<sup>22</sup> «Բողոքարկումը» հնարավոր է, «եթե երեւան է եկել կարելու ապացույց կամ հանգամանք, որը դատավորը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով եւ որոնք կարող է ընդհանուր առմամբ ազդել որոշման վրա»:

33. Խնդիրն արդեն իսկ դիտարկվել է 2017 թվականի հոկտեմբերի եզրակացության մեջ<sup>23</sup>: Իշխանությունները պնդում են, որ Սահմանադրությամբ չի թույլատրվում այդպիսի բողոքարկում, որը ցանկացած պարագայում կլինի անհարկի, քանի որ ԲԴԽ-ն կարգապահական հարցերով հանդես է գալիս որպես դատարան թե՛ ընթացակարգային, եւ թե՛ ինստիտուցիոնալ տեսանկյունից, եւ տվյալ դատավորը կարող է ԲԴԽ-ում օգտվել «արդար դատաքննության» բոլոր երաշխիքներից:

34. Վենետիկի հանձնաժողովի կարծիքով գոյություն ունեն ԲԴԽ-ի որոշումների դեմ բողոք ներկայացնելու հարցը լրջորեն կշռադատելու մի քանի պատճառներ: Առաջին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով անուղակիորեն երաշխավորվում է դատարանի մատչելիության իրավունքը: Եթե ենթադրենք, որ դատավորի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը ազդում է նրա քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների վրա, ապա այդ դատավորի համար պետք է ապահովվի այդ մատչելիությունը: Հարցն այն է, որ արդյոք Հայաստանի ԲԴԽ-ն ի զորու է հանդես գալու որպես «դատարան»: *Ռամոս Նունես դե Կարվալյու է Սան ընդդեմ Պորտուգալիայի* [*Ramos Nunes de Carvalho e Sá v. Portugal*] գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) Մեծ պալատը հանգել է այն եզրակացության, որ քանի որ Պորտուգալիայի դատական իշխանության բարձրագույն խորհուրդը վարչական մարմին է,<sup>24</sup> 6-րդ հոդվածով կպահանջվի «բացարձակ իրավազրոյություն ունեցող դատական մարմնի կողմից հետագա հսկողություն» (132-րդ պարբերություն), այսինքն՝ բողոքարկման ամբողջական գործընթաց: Այլ կերպ ասած՝ եթե ՄԻԵԴ-ը գտնում է, որ ԲԴԽ-ն չի բավարարում դատական մարմնին ներկայացվող պահանջները (ի տարբերություն Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասում նշվածի), ապա ընդհանուր իրավասության դատարան բողոքարկելու

<sup>23</sup> Տողատակի ծանոթագրության մեջ (տե՛ս 2017 թվականի հոկտեմբերի եզրակացության 147-րդ պարբերությունը):

<sup>24</sup> Կարելու է նշել, որ Պորտուգալիայի բարձրագույն խորհրդի «վարչական» բնույթն ընդունվել է կողմերի կողմից, հետեւաբար ՄԻԵԴ-ը դա ընդունել է առանց փաստարկների:

անհրաժեշտությունը կրփի Եվրոպական կոնվենցիայի պահանջներից:

35. Երկրորդ, նույնիսկ եթե 6-րդ հոդվածով որել հարց չի առաջանում, ընդհանուր իրավասության դատարան կարգապահական հարցերով բողոք ներկայացնելու անհրաժեշտությունը բխում է մի շարք եվրոպական փաստաթղթերից, օրինակ՝ ԵԴԽԽ-ի թիվ 10 եզրակացությունը:<sup>25</sup> Թիվ 10 եզրակացության 36-րդ էջում նշվում է, որ «ԴԽ-ի որոշ որոշումների», օրինակ՝ «[...] դատավորների կարգապահության եւ ազատման հետ կապված որոշումների դեպքում» պետք է «նախատեսվի դատական վերանայման հնարավորություն»: Նախարարների կոմիտեի չափանիշներն ավելի ճկուն են. CM(2010)12 առաջարկության 69-րդ էջում նշվում է, որ կարգապահական վարույթը «պետք է իրականացվի անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ ապահովելով արդար դատաքննության բոլոր երաշխիքները եւ դատավորին տալով որոշումը եւ տույժը բողոքարկելու իրավունք»: Այսպիսով, CM առաջարկությունը կկատարվի այն դեպքում, երբ առկա կլինի տույժը բողոքարկելու հնարավորություն, սակայն նշված չէ, թե բողոքը քննող մարմինը պետք է լինի ընդհանուր իրավասության դատարանը, թե՛ ոչ: Ամեն դեպքում CM-ով պահանջվում է այդ հարցերով դատական երկրորդ աստիանի առկայություն, որը Հայաստանի համակարգում բացակայում է:

36. Ի վերջո, հենց Վենետիկի հանձնաժողովը տարբեր առիթներով առաջարկել է ունենալ կարգապահական հարցերով դատական խորհուրդների կայացրած որոշումների բողոքարկման ընթացակարգ<sup>26</sup> միաժամանակ ընդունելով, որ այս բողոքարկումը կարող է ունենալ սահմանափակ շրջանակ: Այսպիսով, Հյուսիսային Մակեդոնիայի վերաբերյալ եզրակացության մեջ Վենետիկի հանձնաժողովն առաջարկել է, որ «Բողոքարկման խորհուրդը պետք է կարողանա չեղարկել ԴԽ-ի որոշումները միայն այն դեպքերում,

<sup>25</sup> Այն համաեվրոպական մարմին է, որի կազմում ընդգրկված են ազգային դատական իշխանությունների ներկայացուցիչներ:

<sup>26</sup> Այդ թվում՝ Հայաստանի նոր Սահմանադրության վերաբերյալ առաջին եզրակացության մեջ, տե՛ս CDL-AD(2015)037, 153-րդ պարբերություն:

երբ դատավարական եւ նյութական իրավունքի կիրառության գործընթացում առկա են կոպիտ սխալներ»<sup>27</sup> եւ Բոսնիա եւ Հերցեգովինայի վերաբերյալ եզրակացության մեջ այն նշել է, որ ընդհանուր իրավասության դատարան ԲԴԴԽ-ի որոշումների բողոքարկումն անհրաժեշտ էր «առնվազն այն դեպքերում, երբ սահմանվում էր խիստ պատիժ»:<sup>28</sup> 2017 թվականի հոկտեմբերի եզրակացության մեջ Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ «վերաքննիչ կարգով իր վերանայումն իրականացնելիս բողոքարկման մարմինը պետք է գործի՝ փաստական հանգամանքները պարզելու եւ համապատասխան վարքագծի կանոնները մեկնաբանելու առնչությամբ հարգալից վերաբերմունք դրսևորելով [Դատական խորհրդի] նկատմամբ»:<sup>29</sup>

37. Սահմանադրությունից հանվել է ԲԴԽ-ի որոշումների դեմ բողոքներ ներկայացնելու հնարավորությունը, իսկ Հայաստանի իշխանության մարմինները զերծ են մնացել այն օրենսդրական մակարդակով ներմուծելուց: Վենետիկի հանձնաժողովը շատ լուրջ է ընդունում Հայաստանի իշխանության մարմինների՝ Սահմանադրության տեքստի նշանակության վերաբերյալ փաստարկները, թեև, իր կարծիքով, Սահմանադրությունը կարող է մեկնաբանվել տարբեր կերպ: Այնուամենայնիվ, սահմանադրական բարեփոխում նախատեսելու դեպքում իշխանության մարմիններին առաջարկվում է դիտարկել ԲԴԽ-ի՝ կարգապահական հարցերի առնչությամբ որոշումների դեմ բողոքներ ներկայացնելու հնարավորության ներմուծումը, նույնիսկ եթե այն սահմանափակ շրջանակով է:

բ. Այլ փոփոխություններ՝ կապված Բարձրագույն դատական խորհրդի հետ

<sup>27</sup> CDL-AD(2019)008, 35-րդ պարբերություն:

<sup>28</sup> CDL-AD(2014)008, 110-րդ պարբերություն:

<sup>29</sup> CDL-AD(2017)019, 151-րդ պարբերություն:



38. Փաթեթի համաձայն առաջարկվում է նվազեցնել ԲԴԽ նախագահի պաշտոնավարման ժամկետը: Համաձայն ԴՕ-ի փոփոխված 84-րդ հոդվածի 9-րդ մասի՝ ԲԴԽ նախագահին ընտրվելու է մեկ տարի ժամկետով, մինչդեռ նախկինում նախագահին ընտրվում էր մինչև իր պաշտոնավարման ժամկետի ավարտը: Համաձայն ԴՕ-ի նախագծի՝ նախագահը վերընտրվելու իրավունք չի ունենալու: Քանի որ ԲԴԽ-ն կազմված է 10 անդամից, որոնք ընտրվում են 5 տարի ժամկետով, նոր կանոնի համաձայն՝ առավել հավանական է, որ կներմուծվի նախագահության ռոտացիոն կարգը: Սույն մոդելի հետ կապված՝ որեւէ խնդիր չկա, այնուամենայնիվ, հստակ չէ, թե ինչ կլինի գործող նախագահի պարագայում. արդյո՞ք նոր օրենքի ընդունմամբ կլրանա նրա պաշտոնավարման ժամկետը: Կարելի է հարգել գործող պաշտոնատար անձանց պաշտոնավարման անվտանգությունը, հետեւաբար գործող նախագահի մասով նպատակահարմար կլինի ընդունել նրա իրավաչափ ակնկալիքները հարգող անցումային օրենք<sup>30</sup>: Ըստ իշխանությունների կողմից տրված պարզաբանումների՝ գործող նախագահը կշարունակի իրականացնել իր պարտականությունները մինչև իր սկզբնական լիազորությունների ժամկետը լրանալը:

<sup>30</sup> Վենետիկի հանձնաժողովը, իր՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ (դատարանի նախագահների պաշտոնավարման ժամկետ) եզրակացության» մեջ (CDL-AD(2014)021, 46-րդ եւ հաջորդող պարբերությունները) դեմ է հանդես եկել դատարանների նախագահների պաշտոնավարման տեւողության մասով նոր օրենքի անմիջապես ընդունումից հետո բոլոր դատարանների նախագահների պաշտոնավարման անհապաղ դադարեցման առնչությամբ: Նմանատիպ եզրակացություն է ստացվել «Վրաստանի ընդհանուր իրավասության դատարանների մասին սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի եւ Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության գլխավոր տնօրինության՝ մարդու իրավունքների տնօրինության համատեղ եզրակացության մեջ (CDL-AD(2014)031, 95-րդ եւ հաջորդող պարբերություններ):

**V. Փոփոխություններ՝ դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ նյութաիրավական նորմերում**

39. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը թվարկվում են ԴՕ-ի 142-րդ հոդվածում: Սույն դրույթը հղում է կատարում 69-րդ հոդվածով սահմանված՝ դատավորի վարքագծի ընդհանուր կանոններին, ինչպես նաև արդարադատություն իրականացնելիս օրենքը չխախտելու պարտականությանը<sup>31</sup>:

40. Պետք է ընդունել այն փաստը, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշ հիմքեր բավական անորոշ ձևով են ձևակերպված. 69-րդ հոդվածով սահմանված հետեւյալ դրույթները՝ «դատական իշխանությունը վարկաբեկող» կամ «դատական իշխանության անկախության եւ անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորել», դրանց թվում են: Այնուամենայնիվ, որոշ չափով անխուսափելի է, որ օրենսդիր մարմինն օգտագործում է ոչ սպառիչ ձևակերպումներ՝ անհրաժեշտ ճկունությունն ապահովելու նպատակով: Դա նախկինում էլ ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից<sup>32</sup>: Եթե օրենսդիր մարմինը կիրառում է այսպիսի ձևակերպումներ, մասնավորապես կարելի է, թե որ մարմինն է պատկանում գործնականում դրանց մեկնաբանության ու կիրառման լիազորությունը: Հայաստանում այս լիազորությունը պատկանում է ԲԴԽ-ին, որն ունի բավարար ինստիտուցիոնալ անկախություն եւ ապահովում է արդար դատաքննության հիմնական երաշխիքները (տե՛ս ԴՕ-ի 14-րդ գլուխը): Կարելի է նաև այն, որ ոչ թե «էթիկայի կանոնների» խախտումների (տե՛ս ԴՕ-ի 68-րդ հոդվածի 3-րդ մասը), այլ միայն դատավորի վարքագծի կանոնների խախտումները կարող են կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք լինել: Այսպիսով, հնարավոր է այդ բաց չափանիշների հետագա մշակումն ու

<sup>31</sup> Հղում կատարելով «արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս [...] նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ եւ կոպիտ խախտում» դրույթին՝ տե՛ս 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

<sup>32</sup> Տե՛ս 2017 թվականի հոկտեմբերի կարծիքը, 67-րդ պարբերություն:

հստակեցումը թողնել ԲԴԽ-ի հայեցողությանը՝ պայմանով, որ այն համապատասխանում է օրենքի այլ սկզբունքների (դատավորի կողմից ցուցաբերված դիտավորության կամ կոպիտ անփութության, խախտման նյութական հետեւանքների եւ այլնի մասով տե՛ս ստորել):

#### **Ա. Նոր վարքագծի կանոններ եւ կարգապահական պատասխանատվության նոր ձևեր**

41. Փոփոխված ԴՕ-ով ներմուծվում են որոշակի նոր պարտականություններ դատավորների եւ նրանց հետ սերտորեն փոխկապակցված անձանց մասով (մեծամասամբ նվերներ ընդունելու եւ ֆինանսական հայտարարագրեր ներկայացնելու պարտականության առնչությամբ): Ավելին, ԴՕ-ի որոշ դրույթներ վերածեակերպվել են դատավորների պարտականություններն ընդլայնելու, նրանց պատասխանատվության ենթարկելու ժամկետները երկարաձգելու եւ այլ նպատակներով: Որպես կարելի է նախնական նկատառում, Վենետիկի հանձնաժողովն ակնկալում է, որ այդ դրույթները չեն ունենա հետադարձ ուժ, ինչպես որ Հայաստանի իշխանության մարմիններն այցելության ընթացքում վստահեցրել են զեկուցողներին: Համոզվելու համար, որ փոփոխությունների սույն ընկալումը գործնականում կկիրառվի, Հայաստանի օրենսդիր մարմինը կարող է դիտարկել ԴՕ-ի տեքստում հետադարձ ուժի բացառման մասով հատուկ դրույթի ներառումը<sup>33</sup>:

<sup>33</sup> Վերոնշյալով չի բացառվում այն հանգամանքը, որ դատավորից կարող է իրավաչափորեն պահանջվել բացատրել իր գույքի կազմում տեղի ունեցած «փոփոխությունները» (Փաթեթով սահմանված նոր պարտականություն)՝ կապված գույքի ձեռքբերման կամ այլ գործարքների հետ, որոնք տեղի են ունեցել մինչև նոր օրենքի ընդունումը: Սակայն գույքի կամ գործարքների օրինական ծագումն ապացուցելու պարտականությամբ չպետք է դատավորների վրա դրվի անհամաչափ բեռ, այն պետք է վերաբերի միայն հատկապես խոշոր գործարքներին և չպետք է վերաբերի, օրինակ, այն գույքին, որը տասնամյակներ շարունակ համարվել է դատավորի կամ նրա ընտանիքի սեփականությունը: Բացատրություններ տալու պարտականությունը պետք է լինի խելամտության սահմաններում:

ա. Ֆինանսական հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը

42. ԴՕ-ի 69-րդ հոդվածի 1-ին մասի նոր՝ 15-րդ եւ 16-րդ կետերով ներմուծվում է դատավորի վարքագծի երկու նոր կանոն. «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան՝ գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագիր ներկայացնելու մասով պարտականություն (15-րդ կետ) եւ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին «գույքի փոփոխությունը հիմնավորող պատշաճ նյութեր» ներկայացնելու պարտականություն (16-րդ կետ): Այդ պարտականությունները չկատարելը կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Վենետիկի հանձնաժողովը ողջունում է այս երկու նոր դրույթների ներմուծումը, որը կարելի է կոռուպցիայի վերացման գործընթացում<sup>34</sup>: Այնուամենայնիվ, Վենետիկի հանձնաժողովն ընդգծում է՝ որպեսզի հնարավոր լինի գործի դնել 16-րդ կետով սահմանված պարտականությունը, դատավորի ֆինանսական վիճակում փոփոխությունը պետք է լինի որոշակի չափով: Չի կարելի դատավորից պահանջել բացատրություն իր կողմից կրած յուրաքանչյուր ծախսի մասով, այլ միայն այն ծախսերի մասով, որոնք հստակորեն չեն համապատասխանում իր պաշտոնական եկամտին: Ավելին, կարելի է, որ հայտարարագրերի բովանդակության նկատմամբ պահանջները լինեն ողջամիտ, որ դրանք կատարման առումով անհնարին պարտականություններ չդնեն դատավորների եւ նրանց մերձավոր ազգականների վրա եւ չբացահայտեն նրանց անձնական կյանքն ավելին, քան անհրաժեշտ է կոռուպցիայի կանխարգելման համար: Ինչ վերաբերում է գույքը, եկամուտը եւ շահերը հայտարարագրելու պարտականության շրջանակին եւ հատուկ գործնական եղանակներին, ինչպես նաեւ «գույքի փոփոխություններ» հասկացությունը բացատրելու նպատակով Վենետիկի հանձնաժողովը

<sup>34</sup> Տե՛ս CDL-AD(2002)15, 57-րդ եւ 70-րդ պարբերությունները, որոնցում Վենետիկի հանձնաժողովը ողջունել է դատավորների՝ իրենց հայտարարագրերը Աուդիտորների դատարանին ներկայացնելու պարտականության առկայությունը:

Հայաստանի իշխանության մարմիններին ուղղորդում է անդրադառնալ ԳՐԵԿՈ-ի փորձագիտական գնահատականին:

43. ԴՕ-ի 149-րդ հոդվածով նախատեսվում է, որ ամենախիստ կարգապահական տույժը՝ լիազորությունների դադարեցումը, կիրառվում է էական կարգապահական խախտումների դեպքում: Վերոնշյալ 15-րդ եւ 16-րդ կետերի համաձայն տեղեկությունների մասին չզեկուցելը համարվում է էական կարգապահական խախտում (142-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետ): Սա ընդունելի է այնքանով, որքանով պահպանվում է համաչափության սկզբունքը, ինչը հստակորեն նշված է 149-րդ հոդվածի 2-րդ մասում:

բ. Նվերներ ընդունելու մասով կանոնները

44. Փոփոխված 73-րդ հոդվածով փոփոխվում է նվերի սահմանումը, որը դատավորը չպետք է ընդունի: Դրանով հեռացվում է ներկայումս գործող պայմանը, որի համաձայն, որպեսզի նվերն անընդունելի համարվի, այն պետք է «կապված լինի իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ»: Այսուհետ բոլոր նվերները, բացառությամբ այդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերում նկարագրված հատուկ դեպքերի, անընդունելի են լինելու: Բացառությունների ցանկը բավական ընդարձակ է. այն հանգամանքը, թե արդյոք ցանկը համատեղելի է միջազգային լավագույն գործելակերպերի հետ, կարող է ստուգվել Հայաստանի իշխանության մարմինների կողմից՝ ԳՐԵԿՈ-ի փորձագետների հետ խորհրդատվությունների միջոցով: Առաջին հայացքից ընդհանուր կանոնը եւ բացառությունների ցանկն անհիմն չեն երեւում, եւ թվում է՝ ընթանում են նույն ուղղությամբ, ինչ Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի 12-րդ հոդվածով սահմանված հիմնավորումը<sup>35</sup>:

<sup>35</sup> Որը սահմանում է. «Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական եւ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են, իր ներպետական իրավունքին համապատասխան, քրեականացնելու դիտավորությամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն *անհիմն օգուտ* խոստանալը [շեշտադրումն ավելացված է], առաջարկելը կամ տալը ցանկացած անձի, որը հայտարարում է կամ հաստատում է, որ ինքը կարող է 2-րդ, 4-6-րդ եւ 9-11-րդ հոդվածներում

գ. Հայտարարագրման պարտականությունը դատավորի հետ սերտորեն փոխկապակցված անձանց վրա տարածելը

45. «Հանրային ծառայության մասին» օրենքով եւ ԴՕ-ով հայտարարագրման պարտականությունը եւ (կամ) նվերներ ընդունելու վերաբերյալ կանոնները տարածվում են դատավորի հետ սերտորեն կապակցված անձանց վրա: Սա ողջամիտ մոտեցում է: Ոչ միայն դատավորն է պարտավոր այդպիսի հայտարարագիր ներկայացնել, այլ նաեւ նրա ընտանիքի անդամները եւ «հայտարարատու պաշտոնատար անձի հետ փոխկապակցված» այլ անձինք (տե՛ս «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի փոփոխությունները)<sup>36</sup>: Վենետիկի հանձնաժողովը կրկին խորհուրդ է տալիս Հայաստանի իշխանության մարմիններին խորհրդակցել ԳՐԵԿՈ-ի հետ՝ արդյոք փոխկապակցված անձանց սահմանումը համապատասխանում է եվրոպական լավագույն գործելակերպերին: Իր կողմից Վենետիկի հանձնաժողովը միայն նշում է, որ առաջարկված փոփոխություններից հստակ չէ, թե դատավորի հետ սերտորեն փոխկապակցված անձանց կողմից հայտարարագիր չներկայացնելը եւ գույքի փոփոխությունները չբացատրելը կամ նվերներ ընդունելու վերաբերյալ կանոնը դատավորի մերձավոր ազգականի կողմից չհարգելը որքանով կարող է օգտագործվել որպես հիմք՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար<sup>37</sup>:

---

[11-րդ հոդվածը վերաբերում է դատավորի պաշտոն ունեցող անձանց] նշված անձանց որոշում կայացնելու վրա ազդեցություն գործել՝ անկախ այն բանից՝ այդ անհիմն օգուտը իր, թե ուրիշի համար է, ինչպես նաեւ նման օգուտ պահանջելը կամ ստանալը կամ այդ օգուտի առաջարկ կամ խոստում ընդունելն այդպիսի ազդեցություն գործելու նպատակով, անկախ այն բանից՝ այդ ազդեցությունն իրագործվել է, թե՛ ոչ, կամ ենթադրվող ազդեցությունը հանգեցրել է արդյոք նախատեսված արդյունքին, թե՛ ոչ»:

<sup>36</sup> Ռումինիայի վերաբերյալ վերջերս ներկայացրած կարծիքում Հանձնաժողովը հայտնել է. «Նախատեսվող նյութական շահը [...] պետք է, այնուամենայնիվ, չսահմանափակվի անհատի եւ նրա ընտանիքի անդամների շրջանակով եւ պետք է ներառի այն անհատների եւ կազմակերպությունների շահերը, որոնց մասով պաշտոնատար անձը շահ ունի, օրինակ՝ քաղաքական կուսակցությունը»: Ըստ ոլորտում աշխատող անձանց կարծիքի՝ շատ դեպքերում ընկերը կամ գործընկերն են շահում իրավախախտումից:

<sup>37</sup> Տե՛ս 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ եւ 16-րդ կետերի շարադրանքը, որոնք ենթադրում են, որ կարգապահական պատասխանատվությունը կարող է կիրառվել միայն դատավորի կողմից իր սեփական հայտարարագիրը չներկայացնելու դեպքում:

46. 73-րդ հոդվածը նաեւ կարգավորում է դատավորի հետ համատեղ բնակվող մոտ ազգականների կողմից ստացվող նվերների հարցը: Այդ հոդվածի 6-րդ մասով դատավորը պարտավորվում է Կարգապահական հարցերի հանձնաժողովին հայտնել իր մերձավոր ազգականին տրված նվերի մասին, որը «ողջամտորեն կարող է ընկալվել որպես դատավորի պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված»: Վերջին պայմանը հանվել էր այնքանով, որքանով այն վերաբերում էր դատավորի կողմից ստացված նվերներին: Հստակ չէ՝ արդյոք դատավորի ազգականների առնչությամբ այս պայմանի մնալու փաստը բացթողում է, թե փորձ է՝ տարբերակելու դատավորի եւ դատավորի մերձավոր ազգականների կողմից ստացված նվերների իրավական ռեժիմները: Դա պետք է հստակեցվի:

դ. Կարգապահական տույժեր կիրառելու հիմքերը

47. ԴՕ-ի փոփոխված 142-րդ հոդվածով նախատեսվում է, որ դատավորը կարող է կարգապահական պատասխանատվության ենթարկվել «նյութական կամ դատավարական իրավունքի նորմը խախտելու» (1-ին մասի 1-ին կետ) կամ «դատավորի կողմից դատավորի վարքագծի կանոնները խախտելու» համար (1-ին մասի 2-րդ կետ)<sup>38</sup>: 149-րդ հոդվածով պարզաբանվում է, թե ինչպիսի տույժեր կարող են կիրառվել՝ սկսած զգուշացումից մինչեւ դատավորի պաշտոնից ազատումը «էական կարգապահական խախտման» դեպքում: Վերջին հասկացության մասով բացատրություն է տրվում Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասում: Նախատեսվում է նաեւ, որ դատավորը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն այն դեպքերում, երբ գործողությունները կատարվել են դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Սա անհրաժեշտ եւ կարեւոր լրացում է:

<sup>38</sup> Վարքագծի կանոնները սահմանվում են 69-րդ եւ 70-րդ հոդվածներով, իսկ 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի ուժով՝ նվերների հարցը կարգավորող 73-րդ հոդվածով:

48. Այնուամենայնիվ, «կոպիտ անփութություն» սահմանումը լիովին բավարար չէ<sup>39</sup>: Ավելի լավ կլիներ նշել, որ նյութական կամ դատավարական իրավունքի նորմը խախտելը չի կարող միայն «ողջամտորեն ենթադրվել», այլ պետք է նաեւ ակնհայտ լինի: Անշուշտ, պարզ սխալի եւ «կոպիտ անփութության» միջեւ տարբերությունն աստիճանի հարց է, սակայն օրենքի ձեւակերպմամբ պետք է ցույց տրվի, որ միայն իրավաբանական ոլորտի ցանկացած մասնագետի համար ակնհայտ սխալները կարող են պատժվել կարգապահական տույժով: Դա կամրապնդի 7-րդ կետով սահմանված մի շատ կարեւոր վերապահում, ըստ որի՝ դատավորի՝ բողոքի մասով կայացված որոշումը չեղյալ հայտարարելն ինքնին չի արդարացնում կարգապահական պատասխանատվության ենթարկելը, ինչը համապատասխանում է ՇՄ (2010)12 առաջարկությանը (66-րդ էջ) եւ ԵԴԽԽ-ի թիվ 3 եզրակացությանը: Բացի այդ, «կոպիտ անփութության» սահմանումը կարող է համեմատվել Քրեական օրենսգրքում պարունակվող այդ եզրույթի սահմանման հետ:

49. Դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը նկարագրում են դատավորի մեղքը, հանցավոր մտադրությունը: Հաջորդ հարցը վերաբերում է այն հանգամանքին, թե խախտման նյութական հետեւանքները որքանով են վերաբերելի կարգապահական խախտումների համատեքստում (պայմանով, որ սուբյեկտիվ տարրը՝ «դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը», առկա են): «Հետեւանքներ» բառը նշվում է «էական խախտում» սահմանման մեջ (տե՛ս վարքագծի կանոնների 6-րդ մասի 2-րդ կետը) եւ թեեւ ոչ բացահայտ, օրենքի խախտման համատեքստում, որը պետք է բավարար չափով լուրջ լինի՝ «հեղինակազրկելու դատական իշխանությունը»: Ավելին, «հետեւանքներ» բառով սահմանվում է հանգամանքներին համապատասխան կարգապահական տույժի աստիճանը (149-րդ հոդվածի 2-րդ մաս): Այսպիսով, երեւում է, որ ԴՕ-ում կարգապահական խախտումը եւ տույժը սահմանվում են՝ հղում կատարելով եւ՛ սուբյեկտիվ տարրին («դիտավորությունը

<sup>39</sup> «Եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեեւ սովյալ իրադրությունում կարող էր եւ պարտավոր էր դա անել»:



կամ կոպիտ անփութությունը») եւ օբյեկտիվ տարրին (խախտման նյութական հետեւանքները): Սա ճիշտ մոտեցում է, թեւեւ կարող էր ավելի հստակ ձեւակերպված լինել: Բացի այդ, Վենետիկի հանձնաժողովը CDL-AD(2017)019 եզրակացությամբ առաջարկել է. «... նախընտրելի կլինի ընդհանրապես չհարուցել կարգապահական վարույթ, եթե խախտումը (նույնիսկ կոպիտ անփութությամբ կատարված) ինքնին աննշան է՝ նվազագույն պահանջ ներկայացնելու համար ...»:

ե. Մարդու իրավունքների խախտումները՝ որպես կարգապահական տույժերի հիմք

50. Փոփոխված 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով տրվում է «էական» կարգապահական խախտման սահմանումը՝ կապված որպես դատարան՝ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման հետ (142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ միայն էական («կոպիտ») կարգապահական խախտում կատարելը կարող է հանգեցնել ԲԴԽ-ի կողմից դատավորի լիազորությունները դադարեցնելուն: «էական» (եւ հետեւաբար, հնարավոր է, լիազորությունների դադարեցմամբ պատժելի) է օրենքի այն խախտումը, որը, ի թիվս այլնի, «հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների եւ (կամ) ազատությունների հիմնարար խախտման»: Այս ձեւակերպումն ավելի լավ է, քան նախկինում քննարկվող առաջարկում ներկայացված ձեւակերպումը, այն է՝ հայտարարագրել դատավորի յուրաքանչյուր գործողությունը, որը հանգեցնում էր ՄԻԵԿ-ի խախտումը ՄԻԵԴ-ի կողմից կարգապահական իրավախախտում համարելուն: Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է, որ ՄԻԵԴ-ը երբեք չի սահմանում որեւէ առանձին դատավորի անհատական մեղքը: Դրա եզրահանգումները վերաբերում են ազգային համակարգի՝ որպես ամբողջություն վատ գործունեությանը, ինչը դժվար թե լինի մեկ դատավորի

մեղքով: 142-րդ հոդվածի 9-րդ մասը պարունակում է կարեւոր վերապահում<sup>40</sup>, որը պետք է հաշվի առնվի նոր 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի մեկնաբանման ժամանակ: Ընդ որում, սխալ չէ միջազգային դատարանների կողմից հայտնաբերված՝ մարդու իրավունքների խախտումների մասին բացահայտ նշելը, եթե դատավորի գործողությունները կարող են դիտարկվել որպես դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարված, այդ պատճառով առաջարկվող տեքստն ընդունելի է:

զ. Ֆինանսական հայտարարագրեր ներկայացնելու պարտականությունը եւ ապացուցման բեռը

51. 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «դատական օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը հիմք է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար»: Այնուամենայնիվ, ամբողջությամբ հստակ չէ, թե ինչպես են 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ եւ 16-րդ կետերը կիրառվելու 142-րդ հոդվածի համատեքստում: 15-րդ եւ 16-րդ պարբերություններով ներկայիս ձեւակերպմամբ սահմանվում են դատավորի՝ երկու զուտ դատավարական պարտականություններ՝ ներկայացնել հայտարարագիր եւ բացատրել «գույքի փոփոխությունները»: Իսկ ի՞նչ կլինի, եթե դատավորը կատարել է այդ երկու պարտականությունները, սակայն նրա հայտարարագրում առկա են սխալներ, կամ եթե նրա կողմից ներկայացված բացատրությունը ճշմարտանման չէ: Հնարավոր է արդյոք, որ ԲԴԽ-ն դատավորի նկատմամբ տույժ սահմանի հայտարարագրում առկա թերությունների կամ ծախսերի ողջամիտ հիմնավորումների բացակայության համար, եւ եթե այո, ապա ո՞վ եւ ի՞նչ պետք է ապացուցի նման իրավիճակներում:

<sup>40</sup> «Արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի եւ ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության»:

52. ԴՕ-ով չի բացատրվում, թե ինչպես է ապացուցման բեռը բաշխվում: ԴՕ-ի որոշ դրույթներ սահմանում են, որ դատավորի «մեղքը» նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու նախապայման է, եւ որ ապացուցման բեռը միշտ դրվում է այն մարմնի վրա, որը գործը բերում է ԲԴԽ<sup>41</sup>: Այնուամենայնիվ, հնարավոր է՝ շատ դժվար լինի ապացուցել կոնկրետ գույքի կամ գործարքների ապօրինի բնույթը, այդ պատճառով առկա են հիմնավոր պատճառներ՝ ապացուցման բեռը տարբեր կերպ բաշխելու համար: Օրինակ, ԴՕ-ով կարող է սահմանվել, որ եթե դատավորի ծախսերն էականորեն գերազանցում են նրա պաշտոնական եկամուտը, նա պետք է դրանց օրինական ծագման վերաբերյալ ողջամիտ բացատրություն ներկայացնի, որը չներկայացնելը կարող է դիտարկվել որպես նրա կողմից վարքագծի կանոնների խախտում: Իշխանությունների հայեցողության շրջանակում է այսպիսի հերքելի կանխավարկած սահմանելը կամ չսահմանելը, սակայն ԴՕ-ն (եւ ոչ այլ օրենքներ) առնվազն պետք է ավելի հստակ լինի, թե այսպիսի դեպքերում ապացուցման բեռը ինչպես պետք է բաշխվի: Այս հարցերում եւս այլ երկրների լավագույն գործելակերպերը կարող են օգտակար ուղեցույց լինել, եւ Հայաստանի իշխանության մարմինները կարող են դիմել ԳՐԵԿՈ-ի փորձագետներին՝ այս առնչությամբ խորհրդատվություն ստանալու նպատակով:

#### **Բ. Դատարանի նախագահների հեռացումը՝ որպես կարգապահական տույժ**

53. Սահմանադրության 166-րդ հոդվածով նախատեսվում է, որ դատարանների նախագահներին ԲԴԽ-ի առաջարկությամբ նշանակում է Նախագահը՝ սահմանված ժամկետով: Վճռաբեկ դատարանի նախագահին

<sup>41</sup> Հետեւաբար 142-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանվում է, որ «Դատավորը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում»: 143-րդ հոդվածով սահմանվում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթը հարուցած մարմինը: Այնուհետեւ սույն հոդվածով նախատեսվում է, որ «դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին», ինչը նշանակում է այդ դեպքերում ապացուցման շատ բարձր չափանիշ:

նշանակում է Ազգային ժողովը՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ: Հարցն այն է՝ արդյո՞ք դատարանների նախագահները եւ մասնավորապես Վճռաբեկ դատարանի նախագահը կարող են հեռացվել կարգապահական վարույթի կարգով, եթե իրենց վերագրվող խախտումը բավարար չափով ծանր չէ՝ հիմնավորելու նրանց՝ որպես դատավոր, պաշտոնից ազատումը:

54. Դատարանի նախագահի՝ սահմանված ժամկետով նշանակվելու փաստը չի բացառում որպես նախագահ նրա գործառույթների վաղաժամ դադարեցման հնարավորությունը: Վճռաբեկ դատարանի դատավորները, թեեւ նրանք նույնպես նշանակվում են սահմանված ժամկետով (տե՛ս 164-րդ հոդվածի 9-րդ մասը եւ 166-րդ հոդվածի 1-ին մասը), կարող են հեռացվել լուրջ կարգապահական խախտման համար: Ավելին, հեռացման մասով որոշում կայացնող մարմինը, պարտադիր չէ, որ լինի նշանակման մասին որոշում կայացնող նույն մարմինը (Վճռաբեկ դատարանի դատավորներն ընտրվում են Ազգային ժողովի կողմից, սակայն կարող են պաշտոնից ազատվել հենց Վճռաբեկ դատարանի որոշմամբ): Պաշտոնավարման անվտանգությունը երաշխավորելու համար կարելի է, որ պաշտոնից ազատման հիմքերը բավարար չափով հստակ նկարագրված լինեն օրենքում (կամ անգամ Սահմանադրության մեջ), որ դրանք բավականաչափ լուրջ լինեն այս միջոցը հիմնավորելու համար, որ դրանք բացառեն քաղաքական հիմքով կամ դատավորի՝ որպես դատավոր կամ նախագահ իր լիազորությունների շրջանակում կայացված որոշումների հետ զուտ անհամաձայնության պատճառով հեռացումը, որ լիազորությունների դադարեցման մասին որոշում կայացնող մարմինը բավարար չափով անկախ լինի, եւ որ հեռացումն ուղեկցվի օրենքի պատշաճ գործընթացի հիմնական երաշխիքներով: Այդ բոլոր տարրերն առկա են ԴՕ-ով սահմանված կարգապահական ընթացակարգում: Հետեւաբար նոր կարգապահական տույժի ավելացումը՝ նախագահի պաշտոնից հեռացումը, առաջին հայացքից չի հակասում Սահմանադրության կամ եվրոպական չափանիշների տրամաբանությանը:

#### Գ. Համալրումը եւ գնահատումը

55. ԴՕ-ի փոփոխված 97-րդ հոդվածով դատավոր դառնալու համար անհրաժեշտ տարիքային շեմը 28 տարեկանից իջեցվում է 25 տարեկանի: Հայաստան կատարած այցի ընթացքում զեկուցողները բազմաթիվ քննադատություններ են լսել դատավոր դառնալու համար նվազագույն տարիքային շեմն իջեցնելու գաղափարի մասին: Վենետիկի հանձնաժողովը, սակայն, չի կարող քննադատել այս առաջարկը *in abstracto*, քանի որ այն բավարար չափով տեղեկացված չէ Հայաստանի կրթական համակարգից, Հայաստանի դատական համակարգի «ժողովրդագրությունից» եւ այլն: Ինչ վերաբերում է Եվրոպայի խորհրդի՝ դատավորների նշանակման պայմաններին վերաբերող չափանիշներին, ապա դրանցում, որպես սահմանափակում, նշված չէ որոշակի տարիք, թեեւ կան ազգային համակարգեր, որոնցում առկա են այդպիսի դրույթներ<sup>42</sup>: Եվրոպայի խորհրդի չափանիշների համաձայն՝ (այսինքն՝ դատավորները նշանակվում են առանց որեւէ խտրականության, արժանիքների հիման վրա՝ հաշվի առնելով որակավորումները, հմտությունները եւ դատական պարտականությունները կատարելու կարողությունը), թեկնածուի առավել ցածր տարիքային շեմը որոշվում է իշխանության մարմինների հայեցողությամբ:

56. Նոր դատավորների համալրման ընթացակարգը ներառում է երկու հիմնական փուլ՝ գրավոր թեստ եւ հարցազրույց: Գրավոր թեստի արդյունքները

<sup>42</sup> CM (2010)12 հանձնարարականով առաջարկվում է, որ դատավորների ընտրությանը եւ կարիերային առնչվող որոշումները պետք է հիմնված լինեն օրենքով կամ իրավասու մարմինների կողմից նախասահմանված օբյեկտիվ չափորոշիչների վրա: Այդ որոշումները պետք է հիմնված լինեն արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումները, հմտությունները եւ այն կարողությունը, որն անհրաժեշտ է գործերի առնչությամբ վճիռ կայացնելու համար՝ օրենքի կիրառմամբ՝ միաժամանակ հարգելով մարդու արժանապատվությունը: Դատավորի պաշտոնի համար դատավորների կամ թեկնածուների նկատմամբ չպետք է որեւէ խտրականություն լինի ցանկացած այնպիսի հիմքով, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնություն հանդիսացող էթնիկ խմբին պատկանելը, գույքային, ծննդյան կամ այլ կարգավիճակի հետ կապված խտրականությունը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը: Դատավորի պաշտոնի համար դատավորների կամ թեկնածուների նկատմամբ պարտադիր տվյալ պետության քաղաքացի լինելու պահանջը չպետք է դիտարկվի որպես խտրականություն (Հանձնարարականի 42-րդ եւ 43-րդ կետեր):

ստուգվում են ԲԴԽ-ի կողմից սահմանված եւ հինգ դատավորներից եւ երկու իրավաբան–գիտնականներից կազմված գնահատման հանձնաժողովի կողմից<sup>43</sup>։ Հարցազրույցն իրականացվում է ԲԴԽ-ի կողմից, որին հետեւում է քվեարկությունը։ Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է այս հարցի շուրջ իր ավելի վաղ ներկայացրած դիտարկումները, մասնավորապես այն, որ նշանակման ընթացակարգում գրավոր թեստի դերը հստակ չէ։ Արդյո՞ք դա «անցել է-չի անցել» տիպի վարժություն է, թե բոլոր թեկնածուները գնահատվում են գրավոր թեստից հետո ստացած գնահատականների համաձայն։ Եթե վերջինը ճիշտ է, ապա ինչպե՞ս են այդ գնահատականներն ազդում ԲԴԽ-ում քվեարկության վրա։ Ըստ երեսույթին, քվեարկությունը հայեցողական բնույթի է եւ լիովին առանձնացված է գրավոր թեստի արդյունքներից։ Հետեւաբար ԲԴԽ-ն կարող է ընտրել գրավոր թեստից շատ թույլ արդյունքներ արձանագրած թեկնածուի եւ հակառակը՝ չընտրել գերազանց գնահատականներ ստացած թեկնածուի։ Սա պետք է հստակեցվի, առնվազն ընդհանուր առմամբ։ Գրավոր թեստերը թույլ են տալիս ավելի օբյեկտիվորեն գնահատել թեկնածուի գիտելիքներն ու հմտությունները։ Հետեւաբար թեստի արդյունքները պետք է առնվազն որոշակի դեր խաղան վերջնական նշանակման որոշման մեջ։ Անշուշտ, դա չի բացառում, որ թեկնածուների վերջնական գնահատման վրա պետք է ազդի նաեւ հարցազրույցի ժամանակ նրանց հանդես գալը։ Հավանաբար կարող էր կիրառվել խառը համակարգ, որի դեպքում գրավոր թեստի ժամանակ ձեռք բերված միավորները կավելացվեին հարցազրույցի ժամանակ ձեռք բերված միավորներին<sup>44</sup>։ Ընդ որում, կամայականությունների դեմ ամենակարեւոր երաշխիքները ընթացակարգի թափանցիկությունն է եւ նշանակման որոշումների հիմնավորումը։

<sup>43</sup> Գնահատման հանձնաժողովի անդամներն ընտրվում են Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի եւ Արդարադատության նախարարության կողմից կազմված ցանկից՝ վիճակահանություն կատարելու միջոցով։

<sup>44</sup> Ինչ վերաբերում է «հոգեբանական թեստերին», ապա Վենետիկի հանձնաժողովը միշտ թերահավատ է եղել դրանց օգտակարության եւ վստահելիության առնչությամբ։ Ուստի դրական է այն հանգամանքը, որ թեւեւ համալրման ընթացակարգը դեռեւս ներառում է այդպիսի թեստ, դրա արդյունքները պարտադիր բնույթ չեն կրում։

## VI. Սահմանադրական դատարանի դատավորների վաղաժամ թոշակի անցնելը

57. Փաթեթում պարունակվող փոփոխություններից մեկն առանձնանում է. դա փոփոխություն է Սահմանադրական դատարանի (ՍԴ) մասին օրենքում, որով ներմուծվում է հնարավորություն ՍԴ հատուկ կատեգորիայի դատավորների (անդամները, այսինքն՝ այն դատավորները, որոնք ձեռք են բերել իրենց մանդատը մինչև 2015 թվականի վերանայումը գործող Սահմանադրությամբ՝ ցմահ, մինչև թոշակի անցնելը) համար՝ իրենց ցանկությամբ պաշտոնաթող լինել մինչև պաշտոնավարման ժամկետի ավարտը մի քանի առավելություններով: Իշխանություններն իրենց մտադրությունների մասով միանշանակ էին. նրանք ցանկանում են առաջարկել կոնկրետ դատավորների, որոնց իրենք ասոցացնում են «հին ռեժիմի» հետ, «արժանապատիվ ելք»՝ որպես այս տարի ավելի վաղ դիտարկված ավելի արմատական եղանակների այլընտրանք: Իշխանության մարմինները պաշտպանում են այս առաջարկը՝ հղում կատարելով հեղափոխության համատեքստին, որի համար անհրաժեշտ է մեծամասամբ նախկին ռեժիմի ժամանակ նշանակված ՍԴ կազմի նորացում, եւ ՍԴ ներկայիս կազմի նկատմամբ հանրային անվստահությանը:

58. Վենետիկի հանձնաժողովը ցանկանում է ընդգծել, որ Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման անվտանգությունն էական երաշխիք է նրանց անկախության համար: Անփոփոխելիությունը նախատեսված է Սահմանադրական դատարանի դատավորներին տվյալ ժամանակվա քաղաքական մեծամասնության ազդեցությունից պաշտպանելու համար<sup>45</sup>: Անընդունելի կլիներ, եթե յուրաքանչյուր նոր կառավարություն կարողանար գործող դատավորներին փոխարինել իրենց

<sup>45</sup> Տե՛ս CDL-STD(1997)020 1997 թվականի «Սահմանադրական դատարանների կազմի մասին զեկույց», 21-րդ էջ, որտեղ Վենետիկի հանձնաժողովն ընդգծում է, որ իշխող կուսակցությունը չպետք է հնարավորություն ունենա նշանակելու բոլոր դատավորներին իր ցանկությամբ: Ուստի Սահմանադրական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետը չպետք է համընկնի խորհրդարանի ժամկետների հետ: Այս դրույթն իրականացնելու եղանակներից մեկը կարող է լինել պաշտոնավարման երկար ժամկետների կամ մինչև թոշակի անցնելը պաշտոնավարելու միջոցով:

ընտրությամբ նորընտիր դատավորներով:

59. Հայաստանի իշխանությունները ծրագրում են վաղ թռչակի անցնելու բացառիկ սխեմայի ներդրում: Նրանք վկայակոչում են 2015 թվականին վերանայված Սահմանադրության կիրառումը հետհեղափոխական համատեքստում եւ համարում են, որ Սահմանադրական դատարանի դատավորների ցմահ պաշտոնավարումը (նախատեսված մինչեւ 2015 թվականի վերանայումը գործող Սահմանադրությամբ) սահմանված ժամկետով մանդատով (նախատեսված Սահմանադրության գործող տարբերակով) փոխարինելը պետք է իրականացվի անհապաղ:

60. Նախ եւ առաջ Վենետիկի հանձնաժողովն ընդգծում է, որ ՍԴ-ի բոլոր դատավորները պետք է ունենան միեւնույն կարգավիճակը՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք նշանակվել են մինչեւ Սահմանադրության 2015 թվականի վերանայումը, թե դրանից հետո: Ինչ վերաբերում է մինչեւ 2015 թվականի վերանայումը նշանակված դատավորների վաղ թռչակի անցնելու սխեմային, Վենետիկի հանձնաժողովը նախկինում քննադատում էր վաղ թռչակի անցնելու սխեմաները, եթե դրանք պարտադիր<sup>46</sup> էին կամ եթե վերաբերում էին մեծ թվով դատավորների<sup>47</sup>: Սակայն այս քննադատությունը չի կարող տարածվել այն դեպքերի վրա, երբ պաշտոնաթողությունը կախված է ՍԴ տվյալ դատավորների կամավոր որոշումից: Սկզբունքայնորեն, եթե վաղ թռչակի անցնելու սխեման շարունակում է լինել իսկապես կամավոր, այսինքն՝ բացառվում է տվյալ դատավորների նկատմամբ ցանկացած անհարկի (քաղաքական կամ անձնական) ճնշում, կամ եթե այն նախատեսված չէ քննության փուլում գտնվող գործերի ելքի վրա ազդեցություն ունենալու համար, ապա չկա որեւէ չափանիշ, որի հիման վրա

<sup>46</sup> CDL-AD(2017)031, 44-52-րդ եւ 130-րդ պարբերություններ:

<sup>47</sup> CDL-AD(2012)001, 102-110-րդ պարբերություններ: Ավելին, 2012 թվականի նոյեմբերի 6-ին Եվրոպական միության Արդարադատության դատարանը որոշեց, որ Հունգարիայում դատավորների թռչակի անցնելու տարիքի հանկարծակի իջեցումը խախտել է հավասար վերաբերմունքի մասին Եվրոպական կանոնները (C-286/12, Եվրոպական հանձնաժողովն ընդդեմ Հունգարիայի): Իր վճռում Լյուքսեմբուրգի դատարանը նշել է, որ վաղ թռչակի անցնելը կարող էր նաեւ «խաթարել դատարանների գործառնական կարողությունը եւ ազդեցություն ունենալ շարունակականության եւ իրավական անվտանգության վրա, ինչպես նաեւ կարող էր ճանապարհ բացել դատական մարմնի կազմի վրա ոչ պատշաճ ազդեցության համար»:



Վենետիկի հանձնաժողովը դեմ կլինի այդ սխեմային: Այնուամենայնիվ, մի քանի կամ նույնիսկ ինը դատավորից ավելի քան յոթի հնարավոր միաժամանակյա թոշակի անցնելը կարող է խոչընդոտել Դատարանի արդյունավետ գործունեությունը: Վենետիկի հանձնաժողովը, հետեւաբար, առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները վերանայեն առաջարկվող սխեման՝ այս մտահոգությունը վերացնելու համար:

## VII. Եզրակացություն

61. Արդարադատության նախարարության կողմից մշակված՝ Դատաիրավական բարեփոխումների փաթեթը, ընդհանուր առմամբ, արժանի է բարձր գնահատականի: Փաթեթի մշակման գործընթացում Հայաստանի կառավարությունը գործել է պատասխանատու եւ կշռադատված կերպով եւ ցուցաբերել է երկխոսության պատրաստակամություն հարցման բոլոր մասնակիցների հետ ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

62. Փաթեթում առկա առաջարկների մեծամասնությունը համապատասխանում են եվրոպական չափանիշներին եւ նպաստում են կոռուպցիայի դեմ պայքարին՝ միեւնույն ժամանակ առանց դատական իշխանության անկախությունը սահմանափակելու: Այդուհանդերձ, անհրաժեշտ են հստակեցումներ, իսկ որոշ տեղերում՝ բարելավումներ: Վենետիկի հանձնաժողովի ամենակարեւոր առաջարկությունները հետեւյալն են.

- Էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի նոր պլյուրալիստական կազմի (ներառյալ՝ դատավորները եւ դատավոր չհանդիսացող անդամները) ներմուծումը ողջունելի է, սակայն օրենսդիր մարմինը կարող է դիտարկել այդ կազմում Վճռաբեկ դատարանից ներկայացուցիչ ընդգրկելը.
- չնայած Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների՝ ուղղակի առաջադրմամբ ընտրության գործող մեթոդը կարող է

ընդունելի լինել, անհրաժեշտ է, որ այն վերանայվի մոտ ապագայում, հենց որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սկսի գործել.

- անհրաժեշտ է ԿԿՀ-ի համար ապահովել դատավորների գույքի վերաբերյալ տեղեկությունների եւ նրանց ֆինանսական վիճակի ու գործառնությունների վերաբերյալ ընդհանրացված տեղեկությունների հասանելիությունը, սակայն դատավորների անձնական կյանքի անձեռնմխելիության վրա ազդող տեղեկությունների հասանելիությունը պետք է ուղեկցվի պատշաճ դատավարական երաշխիքներով.
- անհրաժեշտ է մշակել, հավանաբար սահմանադրական մակարդակով, կարգապահական հարցերի առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) որոշումները բողոքարկելու մեխանիզմ.
- Ֆինանսական հայտարարագրերի մասով դատավորների նոր պարտականություններն ընդունելի են (պայմանով, որ դրանք հետադարձ ուժ չունենան), սակայն ԴՕ-ն պետք է ավելի հստակ լինի այն առումով, թե նման դեպքերում ինչպես է բաշխվում ապացուցման բեռը: Դատավորը մարդու իրավունքների խախտման դեպքում պետք է կրի նույն պատասխանատվությունը, ինչ ցանկացած այլ խախտման դեպքում, եթե առկա է դիտավորություն կամ կոպիտ անփութություն.
- ԴՕ-ում պետք է ավելի լավ բացատրվի գրավոր թեստի եւ հարցազրույցի դերը երիտասարդ դատավորների համալրման գործընթացում:

63. Առաջարկվող բարեփոխումների մեկ հայեցակետ, մասնավորապես՝ մինչեւ 2015 թվականի վերանայումը գործող Սահմանադրությամբ ցմահ նշանակված՝ Սահմանադրական դատարանի դատավորներին առաջարկված վաղ թոշակի անցնելու սխեման առանձնանում է: Սկզբունքորեն, կարելի է հարգել դատավորի պաշտոնի կայունությունը: Ընդունելի չէ Սահմանադրական դատարանի կազմի փոփոխությունն ամեն անգամ, երբ նոր կառավարություն է

գալիս իշխանության: Այնուամենայնիվ, ըստ էության, եթե այդ սխեման շարունակի լինել խիստ կամավոր եւ խոչընդոտ չհանդիսանա այս Դատարանի արդյունավետ գործունեության համար, ապա չկա որեւէ չափանիշ, որի հիման վրա Վենետիկի հանձնաժողովը դեմ կլինի դրան:

64. Վենետիկի հանձնաժողովը պատրաստակամ է հետազայում այս հարցում աջակցություն տրամադրել Հայաստանի իշխանության մարմիններին: